ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1898 թ.

Բ. ԳՐՔԻ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄՕՐԷՒ ԻՇԽԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Թարգ. Վահան Ծ. Վ. Բաստամեան

(Սկիզբը՝ 1—48 երես տպուած է «Լումայ»-ի 1898 թ. Ա. գրքում):

հիւանդութիւնդ և մնում ես այստեղ երեկոյեան խոնաւութեան ժամանակ։ Գնա՛ տուն, աղջիկս, գնա։

Աննան հնազանդուեցաւ. նա լռիկ գլուխ տուեց Խամարէթին և հեռացաւ։ Պետրալիֆասը մնաց Առիւծի հետ։

—Այո՛, սիրե՛լիս, ասաց նա, վերականգնել կայսերական գահը։ Այդ յոյսից իմ ծերացած սիրտս բաբախում է չորացած կուրծքիս մէջ այնպէս, ինչպէս երիտասարդական արիւնը եռում է ձեր երակների մէջ։ Իմ մարող աչքերս դեռ ևս յոյս ունին տեսնել այդ երջանկութիւնը առաջ քան թէ կփակուին յաւիտեան։ Իմ փեսաս, Ելլադայի իշխանը, զոհում է իւր թագը, իւր գանձերը և իւր իշխանութիւնը մեր ազգի ազատութեան համար։ Այո՛, իւր թագը, կայսերական թագի այդ բեկորը, ազատուած մրրիկից, նա ոգևորութեամբ կտայ Աստուծոյ ընտրեալ կայսրին, երբ կհասնի այդ մեծ օրը։ Բայց մենք չըպիտի բաւականանանք միայն անհիմն յոյսերով և պարտաւոր ենք միտը պահել արգելքների բոլոր ծանրութիւնը։ Ֆրանկները—սարսափելի թշնամիներ են. նոցա մարմինները նոյն պողպատից են, որից և նոցա զրահները։ Եւրոպան հեղեղում է նոցա անսպառելի լեգէոններով։ Փրկչի գերեզմանը մոռացուած է Յունաստանի պատճառով, և ամեն օր նոր, ագահ, ասպետները յարձակւում են մեր անբախտ հայրենիքի գիշատած դիակի վերայ։ Նոցա դէմին մենք կարող ենք դէմ դնել միայն մի զէնք—նոցա իսկ դէմը, կամ՝ եթէ կամենում ես ուրիշ խօսքերով ասեմ՝ երկպառակութիւնը մեր նուաճողների մէջ։

—Կայ և մի ուրիշ զէնք, աւելի նպատակայարմար—միութիւն մեր մէջ, պատասխանեց Խամարէթը։ Թող լինի մեր մէջ մտքի միութիւն, շահերի ընդհանրութիւն, թող միայն մի զգացմունք, եղբայրութեան զգացմունքը շաղկապէ մեզ անքակելի կապերով բոլոր կեանքի մէջ, անքակելի մինչև մահը։

—Այո՛, ի հարկէ, ասաց ծերունին, միութիւնը—մեր շինուածքի հիմն է, և այդ շինուածքը հիմնարկելու համար ես առաջարկում եմ ձեզ ձեռքս իմ փեսայի կողմից։ Շինուածքի հիմունքը—ազգի շահերը։ Բայց ամենից աւելի մենք պէտք է զգուշանանք և ծածկենք թշնամուց մեր ոյ-

ժերը։ Ուրեմն, մեր մէջ միութի՛ւն բայց ծածուկ. նոցա մէջ —երկպառակութի՛ւն։ Առաջինը կախուած է մեզանից, երկրորդը առաջ է գալի մեզ հանգամանքի բերմունքով։

Այդտեղ ծերունին բռնեց երիտասարդի ձեռքը և ասաց նորա ականջին.

—Իմացէ՛ք ուրեմն երևելի գաղտնիքը. հաղորդում եմ ձեզ այդ իբրև առհաւատչեայ մեր միութեան։ Ոչ ոք չը-գիտէ այստեղ այն բանը, ինչ որ ես կասեմ ձեզ. չգիտէ այդ մինչև անգամ ինքը կուսակալը.—նորան, Վիլլարդուինին, փոխում են։

—Փոխո՞ւմ են, ասաց Խամարէթը, մի՞թէ։ Բայց, ի հարկէ, նորա փոխանակ կուղարկե՞ն Պելոպոնէսի համար մեկ ուրիշին։

—Այո՛, պատասխանեց Պետրալիֆասը. Շամպլիտը կարգում է իւր եղբօրորդուն Մօրէի իշխան։

—Բայց մեզ ի՞նչ գործ այդ բոլորի մէջ։ Ի՞նչ օգուտ կստանանք մենք նորանից, որ կփոխեն այն ձեռքը, որ ամրացնում է մեր շղթաները։ Վիլլարդուինի ձեռքը գոնէ քաջ է և արդարասէր։

—Բայց մի՞թէ դուք կարծում էք, հարցրեց ծերունին, որ կուսակալը իւր իրաւունքները կտայ նոր իշխանին։

—Չեմ կարծում. նորա ինքնասիրութիւնը մեծ է և դիւրագրգիռ, և ես չեմ կարծում, որ նա իրաւացի համարէր հեռանալ մի երկրից, որը նա ինքն է նուաճել։

—Բայց ի՞նչպէս էք կարծում, Շամպլիտի եղբօրորդին կհրաժարուի՞ այն իշխանութիւնից, որ տալիս են նորան։

—Ի հարկէ ո՛չ, նա կընդունի այն։

—Դէ՛, ուրեմն ահա՛ ինչ օգուտ կստանանք մենք դորանից, ասաց Պետրալիֆասը—երկպառակութիւն նոցա մէջ։ Մինը կկամենայ տիրել Մօրէին, միւսը կաշխատէ իւր ձեռքին պահել այդ աւարը։ Իսկ մեզ մնում է միայն պահպանել երկպառակութիւնը և քաղել նորանից մեր օգուտը։ Լսեցէք, Վիլլարդուինը հզօր է Պելոպոնէսում. այստեղի բոլոր բարոնները նորա ընկերներն են զէնքով, և ամենքը ուրախութեամբ կկանգնեն նորա դրոշակի տակ։ Նորա հակառակութիւնը նորեկ իշխանի դէմ,—իսկ հակառակութիւն կլինի, ես հաւատացած եմ,—կվերջանայ յօգուտ Վիլ-

լարդուինի—դորա մասին չէ կարող անգամ կասկած լինել։ Բայց, ենթադրենք, որ դուք, իմ սիրելի՛ Առիւծ, կդնէք կշեռքի մէջ ձեր թուրը և ձեր հին զինակիցների թրերը յօգուտ Շամպլիտի։ Այն ժամանակ ոյժերը հաւասարակշռութիւն կստանան և նորա կսկսեն ջնջել միմեանց։ Իսկ արտաքին ցոյցը կլինի այն թէ՝ Ցունաստանը իւր պաշտպանում է իւր օրինաւոր իշխանին, որպէս վայել է հաւատարիմ հպատակներին։

—Բայց եթէ Վիլլարդուինը կնահանջէ՞, նկատեց Խամարէթը։

—Այդ դիպուածում, պատասխանեց Պետրալիֆասը, մեր գործի կէսը կատարուած կլինի։ Այստեղից կհեռանայ փորձուած մարդը, որի իշխանութիւնը արմատացել է, որի ազդեցութիւնը հաստատւում է սրով և արդարասէր կուսակալի համբաւով. իսկ նորա տեղը կբռնէ մի անծանօթ իշխան, որ ոչինչ տեղեկութիւն չունի իւր նոր կալուածքի մասին, որ ծանօթ չէ նոր ընկերների հետ։

—Ձեր խորհրդածութիւնը փայլում է խորին իմաստութեամբ, և ես պատրաստ եմ հետևել դորան, պատրաստ եմ կանգնել մեր ճնշողներից թոյլի կողմը։ Ես ոչինչ բանով պարտաւորուած չեմ Վիլլարդուինից. ես մատուցի նորան Լակեդեմոնի բանալիները, երբ նա այլ ևս չունէր պաշտպաններ, բայց ես ինքս ինձ աքսորեցի իմ մայրենի քաղաքից և Պելոպոնէսից։ Միայն ձեր ստիպելով ես համաձայնուեցայ ուղեկից լինել ձեզ այստեղ։

—Ձեր տեղը,—այստեղ է, որդի՛ս։ Եթէ անցեալը ձեզ դաւաճանեց, ձեզ մնում է ապագան։ Տեսակցեցէք ձեր հին զինակիցների հետ և յորդորեցէք նոցա կանգնել Շամպլիտի կողմը, ընդդէմ Վիլլարդուինի։

—Մեր պարտաւորութիւնն է իսկապէս—կանգնել երկուսի դէմ, պատասխանեց Խամարէթը։

—Բայց խոհեմութիւնը պահանջում է, որ մենք ստիպենք նոցա ջարդել միմեանց։

Այդ ժամանակ պարտիզումը լսուեցան ոտի ձայներ։

—Ով որ գալիս է, ասաց Պետրալիֆասը։ Հարկաւոր չէ, որ մեզ տեսնեն միասին։ Գնացէք։

Երբ Խամարէթը գնում էր, Պետրալիֆասը դարձեալ բռնեց նորա ձեռքը.

—Գաղտնի միութիւն մեր մէջ, երկպառակութիւն նոցա մէջ—ահա՛ մեր նշանաբանը, ասաց ծերունին կամացուկ։

Եւ նա ճանապարհ ձգեց հիւրին մինչև պարտիզի դռնակը, իսկ յետոյ ընդ առաջ գնաց այն անձին, որի քայլերի ձայնը լսւում էր պարտիզում։ Առաջին հայեացքից Պետրալիֆասը ճանաչեց իսկոյն Նոննին իւր մորթեղէն շորերի մէջ։

—Դուք պատրաստ է՞ք, Նոնն, հարցրեց նա։

—Ես սպասում էի միայն ձեր վսեմափայլութեան։ Ես կամենում եմ դուրս գնալ Լակեդեմոնից դեռ լոյսը չբացուած։ Գիշերով պատրաստվում են ճանապարհ ընկնել բոլոր հովիւները։

—Գնա՛, սիրելի՛ս, հաւատարիմ և մտերիմ, աշխատիր աւելի ևս արժանանալ իշխանիդ շնորհակալութեան։ Բեր Ռօքէրին, քայց հսկիր նորա վերայ։ Սակայն խորհուրդ տուր նորան վերցնել իւր հետ լաւ թիկնապահներ։ Վիլլարդուինը այնպիսի մարդ չէ որ, որ ձրի տուր տայ հարուստ աւարը։ Ասա նորան ի միջի այլոց, որ մենք մեր կողմից գործ ենք դրել հարկաւոր միջոցները, որ մենք արդէն հոգացել ենք ըստ կարելւոյն մաքրել նորա ճանապարհը։ Ասա նորան, որ եթէ Վիլլարդուինը կընդդիմանայ, որպէս ես կարծում եմ, ես առաջարկում եմ իշխանին Պելոպոնէսի յոյների օգնութիւնը։

—Ներեցէք հարցնեմ, ի՞նչ կերպով կլինի այդ։

—Առիւծ Խամարէթի աջակցութեամբ։

—Նո՞ր, որը պաշտպանում էր Լակեդեմոնը ընդդէմ Վիլլարդուինի։

—Իսկ նորա։ Ես գտել եմ երկու զսպանակ, որոնք կառավարում են նորան։

—Փառասիրո՞ւթիւն և օգո՞ւտ, ի հարկէ։

—Ոչ, ազգասիրութիւն և սէր։

—Սէ՞ր։

—Սէր առ իմ թոռնուհին։ Ես պահում եմ նորան երկիւղի և յոյսի մէջ—դա ամենաօգտակար հնարն է։ Անանն այնուամենայնիւ մնում է նշանակուած Պելոպոնէսի ա-

պագայ իշխանի համար։ Նա կդառնայ Գոդֆրիդի, կինը եթէ Վիլլարդուինը կմնայ այստեղ, կամ Ռոբէրի, եթէ նա կգայ։

—Նա կգայ, պատասխանեց Նոնոնը, և կգայ ցնորուած սիրահարութիւնից։

—Դէ, ուրեմն, բարի ճանապարհ, ասաց Պետրալիֆասը. քո իշխանի շահերը քո խոհեմութեան և ճարպիկութեան ձեռքումն են։

Կեղծ հովիւը գնաց։

Մինչդեռ այս բոլոր անցքը կատարւում էր Պետրալիֆասի մօտ, Վիլլարդուինը, տուն վերադառնալով, գնաց ուղղակի իւր սենեակը։ Բայց որչափ մեծ էր նորա զարմանքը, երբ տեսաւ իւր սեղանի առաջ բազկաթոռի մէջ աբեղայական հագուստով մի մարդ քնած, որ սաստիկ խռնչում էր։ Բայց կուսակալը իսկոյն ծիծաղեցաւ բարձր ձայնով և ձեռքը զարկեց քնածի ուսին։ Նա սթափուեցաւ և աչքերը շփեց։

—Ախ, իրաւունք ունիք, ձերդ պատուառատայլութիւն, ասաց նա։ Աւելի ախորժելի է քնել Մորէի կուսակալի բազկաթոռի մէջ, քան թէ ճանապարհորդել դէպի Ֆրանսիա։

—Ե՞րբ ես ճանապարհ ընկնում, հարցրեց Վիլլարդուինը ժպտալով։

—Այժմ իսկոյն, պատասխանեց Մատիօ դը-Մոնսը։ Նոնոնը պէտք է դուրս գնայ կէս գիշերին, և որովհետև նա պէտք է վճարէ իմ ճանապարհածախքը, ուստի չէ հարկաւոր ստիպել նորան սպասել ինձ։

—Լաւ ես ասում, գնա, և վերադարձիր.... որքան կարելի է ուշ.

—Շնորհակալ եմ բարեմաղթութեանդ համար։ Բայց ամենից առաջ հարկաւոր է ձեզանից մի նամակ ստանալ։

—Ո՞ւմ անունով։

—Վենետկի Դոժի (կուսակալ)։ Նա մեծ պետ է, և ես կամենում եմ ծանօթանալ նորա հետ։

—Դու գիտես, որ նա իմ լաւ բարեկամն է։ Ի՞նչ է հարկաւոր գրել նորան։

—Շատ մեծ վստահութիւն չի՞ լինի, արդեօք, իմ կողմից, եթէ խնդրեմ ձերդ վսեմափայլութիւնից գրել Դոժին, որ ես ձեր սիրելի բարեկամն եմ և թէ նա կարող է հա-

ւատալ ինձ այնպէս, ինչպէս յատուկ ձեզ։

Վիլլարդուինը ջերմ կերպով սեղմեց Մատիօի ձեռքը։ Նա գրեց նամակը և յանձնեց դը Մօնսին։

—Ցանկանում եմ բարի ճանապարհ, ասաց նա, գրեթէ նոյն խօսքերով, ինչպէս և Պետրալիֆասը Նօննին։ Ցանձնում եմ իմ վիճակս քո խոհեմութեան և քո մտերմութեան։

7

ՌՕԲԷՐԸ ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ՃԱՆԱՊԱՐՀ ԸՆԿՆԵԼՈՒ։

Արշալոյսը դեռ նոր էր բացւում երբ Մատիօ դը-Մօնսը դուրս գնաց Լակեդեմոնից։ Մի երկու ժամից յետոյ նա հասաւ հովուին, որ գնում էր առաջից. նա յարգանքով համբուրեց սորա աջը։ Մատիօն ճանաչեց հովուի շորերով Նօննին և օրհնեց նորան։

Յետոյ Դը-Մօնսը գնաց աջ, իսկ հովիւը ճանապարհ բռնեց ձախ։ Մի ժամից յետոյ Մատիօն հասաւ առաջին գիւղը և մի ձի վարձեց այնտեղ։ Այդպէսով նա հասաւ Պօնտիկօ փոքր ինչ առաջ Նօննից, որը նոյնպէս վարձեց իւր համար մի ձի, երբ բաւական հեռացաւ Լակեդեմոնից։

Նօննը մտաւ նաւը։ Դը-Մօնսը նաւաստիի պաշտօնով վարձուեցաւ նոյն նաւի վերայ։ Նոցա ճանապարհորդութիւնը Պելոպոնէսից մինչև Ֆրանսիա աւելի յաջողակ էր և արագ, քան թէ առաջին անգամ։ Երբ հասան Մարսէլ, նաւապետը ոռճիկ բաժանեց նաւաստիներին։ Դը-Մօնսը յանդգնութեամբ վարուեցաւ նաւապետի հետ, որը բարկացաւ և դուրս արեց նորան։ Մի քանի օրից յետոյ Մատիօն հասաւ Համպլիտ Փարիզի ճանապարհով։

Նա իսկոյն ներկայացաւ Ռօբէրին։ Դը-Մօնսը կանգնած էր նորա առջև մեռելի պէս դեղնած. նորա ոտները դողում էին։

—Մատիօ դը-Մօնս, գոչեց Ռօբէրը, փոքր ինչ յօնքերը կնճռելով։ Երդվում եմ սուրբ Դիոնէսիոսի անունով, որ այս հրաշք է։ Երևի, սիրելիս, շատ հաւանեցիր Փարիզը։ Ես սկսում էի կարծել, որ դու արդէն թագաւորի

մօտ պտշտօն էիր գտել կամ գնացել էիր արդարոց բնակարան։

—Այո՛, ձերդ բարձրութիւն, պատասխանեց դը-Մօնսը նուազ ձայնով, յիրաւի, ես անարժան մեղաւորս, քիչ էր մնացել, որ գնայի արդարոց բնակարանը։

—Ինչպէս, հի՞ւանդ էիր, հարցրեց Ռօբէրը։

—Միթէ կարելի՞ է հարցնել այդ ինձանից։ Ես կարծում էի, որ իմ դողդոջուն անդամներս և իմ մեռելատիպ դեղին երեսս ցոյց են տալիս իմ դրութիւնը։

- Ուղիղ է, երեսդ... ո՛հ խեղճ։ Դու դեղին ես ինչպէս Ղազարոսի մեղրամոմի արձանը. առաջ ինձ թուեցաւ թէ սպիտակ ներկ ես քսել երեսիդ։

—Այո՛, մահու ներկ, խղճալի ձայնով ասաց դը-Մօնսը։ Ո՛հ, նզոված Փարիզ. նորա փողոցների ցեխից և նորա Սէնի ճահճային ափերից ես ստացայ ամենասաստիկ տենդացաւ, որը քիչ էր մնացել հնձէր ինձ ծաղիկ հասակումը։ Թոյլ տուէք ինձ նստել, ձերդ բարձրութիւն. ոտներս դողում են ինչպէս եղէգն։

- Նստիր, նստիր, ասաց Ռօբէրը, ցոյց տալով աթոռը։ Տեսնում եմ, որ դու շատ թոյլ ես։ Բայց մեկնիր ինձ մի բան։ Երբ ես կորցրի համբերութիւնս սպասելով քեզ, նամակ գրեցի Փարիզ մի քանի բարեկամներիս և մի քանի պալատականներին, որ մի տեղեկութիւն հաղորդէին ինձ քո մասին. բայց դուրս եկաւ, որ նոցանից ոչ ոք ոչ տեսել էր քեզ և ոչ լսել քո մասին։

—Հասկանալի է, որ ոչ ոք ոչ տեսել է ինձ և ոչ լսել մի բան իմ մասին։ Մի՞թէ դուք կարծում էք, ձերդ բարձրութիւն, որ եթէ Փարիզում իմանային, որ ես գնացել էի այնտեղ փող գտնելու ձեզ համար, կարող էի գտնել այդ փողը յիսուն տոկոսից պակաս։ Պելոպոնէսի ապագայ իշխան.—որպիսի գիւտ իսրայէլացի վաշխառուների համար։ Ո՛չ, ես ծածկւում էի այնտեղ կեղծ անունով։

—Ա՛խ, որպիսի գեղեցիկ միտք։ Բայց ի՞նչ անուն էիր կրում դու այնտեղ։

—Ի՞նչ անուն էի կրում։ Ո՛հ, ես կոչվում էի.... Այո՛, ես կոչւում էի Մօնէլ դը-Մօնֆօր։

—Այո՛ այժմ ես հասկանում եմ թէ ինչո՞ւ ոչ ոք

ոչինչ չգիտէր քո Փարիզում լինելու մասին։ Բայց անուանդ փոփոխութիւնը և Փարիզի մէջ երկար մնալդ գոնէ որևիցէ հետևանքի հասցրո՞ւն քեզ։

—Հետևանքն էր ութը հազար ոսկի։

—Ինչ ես ասում, բացականչեց Ռօբէրը և նորա աչքերը փայլեցան։

Եւ երախտագիտութեան զգացմունքով յափշտակուած նա բռնեց Մատիօի երկու ձեռքը։ Երիտասարդ Շամպլիտը դեռ երբէք իւր ձեռքին այդպիսի գումար չէր ունեցել։

—Բայց երևի թէ, սկսեց նա, չափաւորելով իւր ոգևորութիւնը, դու փոխ ես առել այդ գումարը քառասո՞ւն կամ յիսո՞ւն տոկոսով։ Այդ նոր իշխանութիւնս կաղքատացնէ ինձ առաջ քան թէ կհարստացնէ։

—Ո՛հ, ինչպէս դողում են ոտներս, ասաց Դը-Մօնսը։ Երբ ես մաքառում էի մահու հետ, միևնոյն ժամանակ ես մաքառում էի և վաշխառուների հետ։ Վերջ ի վերջոյ ես յաղթեցի և մէկին, և միւսին։ Առաջ ջհուդները պահանջեցին յիսուն տոկոս, իսկ ես առաջարկեցի նոցա տասնևհինգ—համաձայնութիւնը չկայացաւ։ Երկու շաբաթից յետոյ նոքա իջան քառասունին, իսկ ես տասներկուսին—մենք դարձեալ չկարողացանք համաձայնուիլ։ Էլի մի երկու շաբաթից յետոյ ջհուդները իջեցրին երեսունին, իսկ ես տասից աւելի չտուի։ Վերջապէս, սպասելով դարձեալ երկու շաբաթ, վաշխառուները առաջարկեցին ինձ փողը քսան տոկոսով, իսկ ես խօսք բացի միայն ութի մասին։ Վերջ ի վերջոյ, ջհուդները տեսան, որ գործը գնում է նոցա համար վնասակար կերպով։ Իսկ ես իմ կողմից տեսայ, որ բանագնացութեանց մէջ կորցրել եմ ամիս ու կէս։ Մենք համաձայնուեցանք տասը տոկոսով։

—Տասը տոկոսով, գոչեց Ռօբէրը ուրախութիւնից, փարուելով Մատիօ դը-Մօնսի վզով։ Սիրելի՛ս, աւելացրեց նա, երբ ես կհասնեմ Պելլպոնէս, քեզ կտամ ամբողջ իշխանութեան կալուածքներից ամենալաւը։ Ամենից առաջ քեզ թոյլ կտամ ընտրութիւն անել։

—Ո՛հ, ձերդ բարձրութի՛ւն։ Իմ միակ ցանկութիւնն է որքան կարելի է շուտով տեսնել ձեզ ձեր հպատակների մէջ։

—Դու ինձ մատուցիր խիստ մեծ ծառայութիւն, իմ բարի Մատիօ, և այնպէս ի դէպ, այնպէս լաւ ժամանակ։ Ես արդէն վճռել էի գնալ առանց քեզ սպասելու, եթէ դու չվերադառնայիր էլի մի շաբաթ. ձմեռը հեռու չէ։ Բայց երեկ տեղեկութիւն ստացայ Պելոպոնէսից։ Ելլադայի իշխանի աները այժմ Վիլլարդուինի մօտն է։ Դու գիտես, որ նա առաջարկել էր իւր աղջիկը ինձ կնութեան։ Պետրալիֆասը հաղորդում է ինձ, որ Պելոպոնէսի կուսակալը գուցէ յօժար կամքով տուր չտայ ինձ իւր տեղը։ Երկիւղ կրելով նորանից, Պետրալիֆասը աշխատում է յորդորել յոյներին անցնել իմ կողմը. բայց նա կարծում է որ՝ և ես պէտք է հասնեմ այնտեղ այնպիսի զօրութեամբ, որը կարողանար ազդել յարգանք և երկիւղ։

—Այդ աները, ինչպէս երևում է, խոհեմ և խելացի մարդ է. նորա խորհուրդը հիանալի է, և բարեբախտաբար դա այժմ ձեզ համար դիւրակատար է. այժմ դուք ունիք փող։ Իմ կարծիքով, պէտք չէ ժամանակ կորցնել և այս օրից իսկ հարկաւոր է զօրք կազմել։

—Այս օրից ի՛սկ, այս րոպէից ի՛սկ, և քեզ եմ յանձնում ժողովել յիսուն ձիաւոր, նիզակներով զինաւորուած, և յիսուն հետևակ զինուոր։

Այդ խօսակցութիւնից յետոյ Մատիօն գտնւում էր մշտական հոգսերի մէջ. նորա գործունէութիւնը անխոնջ էր։

Նա միշտ շարժողութեան մէջ էր. վազվազում էր ամեն կողմ, առնում էր զէնք, գնում էր ձիեր, վարձում էր զինուորներ։ Բայց նա այնպէս խիստ էր ընտրութեան մէջ, այնպիսի ուշադրութիւն էր դարձնում յատկութեանց վերայ, երկրորդական բան համարելով քանակութիւնը, որ առաւօտը հաւանած ձին երեկոյին անպիտան էր համարում, և երեկ ընդունած զինուորին այսօր ջնջում էր ցուցակից։

Տասներկու օրից յետոյ, Ռօբէրը, կանգնած պատուհանի մօտ, բաւականութեամբ ցոյց էր տալիս Նօննին Մատիօի վերայ, որ անցնում էր բակով երեք նոր վարձած զինուորների հետ, որոնք երերւում էին սաղաւարտի, զրահի և զէնքի ծանրութիւնից։ Նօննը փոքր ինչ նախանձում էր այն հաւատընծայութեան, որ Ռօբէրը ցոյց էր տալիս Մատիօին։

— Իմ հայրենիքում, ասաց Նոնը, պատմում են, որ երբեմն մի կին կար, որ հիանալի կերպով գործում էր կըտաւ։ Բայց նա ունէր մի զարմանալի հիւանդութիւն — ինչ որ ցերեկը գործում էր, գիշերը բոլորը քանդում էր։ Այդպէսով նա միշտ զբաղուած էր գործով, բայց գործը առաջ չէր գնում։ Ինձ թւում է, որ ձեր զօրքի ժողովելը կատարւում է գրեթէ նոյն արագութեամբ, ինչպէս գործւում էր գեղեցիկ Պենէլոպէի կտաւը։

— Նոնն, պատասխանեց Ռոբէրը, ես նկատում եմ, որ դուք չէք սիրում Մատիօ Դը-Մոնսին։

— Գուցէ։ Բայց այն, ինչ որ ասում եմ ձեզ, կատարեալ ճշմարտութիւն է։ Ահա անցաւ արդէն 12 օր, ուրեմն ձմեռը և նորա հետ կապուած բոլոր վտանգները ճանապարհորդութեան համար մօտեցան 12 օրով։ Սակայն, Դը-Մոնսը պատրաստ է։

— Ի՞նչպէս, դուք կամենում էք, որ 12 օրում զինուորուած պատրաստ լինի մի ամբողջ գունդ զօրք։

— Հաւատացնում եմ ձեզ, ձերդ բարձրութիւն, այդ միջոցում նա կարող էր կազմել մի խաչակիր արշաւանք։

— Այդ նշանակում է պահանջել անկարելի բան։

— Զգիտեմ, պատասխանեց Նոնը։ Բայց սարերը ծածկվում են ձնով և ալեկոծութիւնները արդէն սկսվում են ծովի վրայ։ Բացի սորանից՝ Պելոպոնէսում ես լսեցի, որ ձեր հօրեղբայրը իբր խոստացել է Վիլլարդուինին իշխանութիւնը, եթէ չի ուղարկի իւր յաջորդին մինչև գարունը։

— Ի՞նչ էք ասում, գոչեց Ռոբէրը. ուղի՞ղ է այդ արդեօք։

— Զգիտեմ ուղիղ է թէ ոչ, բայց այնուամենայնիւ այդ բանի մասին խօսում էին այնտեղ։ Եւ եթէ ուղիղ էլ չլինի, ձերդ բարձրութիւնը ոչինչ չի կորցնի փոքր ինչ աւելի շուտ հասնելով իւր երկիրը։ Իսկ եթէ ուղիղ է, — ձեր օգուտը մեծ կլինի։

— Ո՛հ, ի հարկէ, ի հարկէ, ասաց Ռոբէրը, շփոթուած քայլելով սենեակի մէջ։ Եթէ այդպէս է — այդ ուրիշ բան է։ Ես հաւատացած եմ սակայն, որ իմ թիկնապահները դեռ ևս պատրաստ չեն։

Ռոբէրը ձայն տուեց իւր պալատականներից մէկին և պատուիրեց կանչել Դը-Մոնսին։

— Եթէ նոքա պատրաստ չեն, աւելացրեց Ռոբէրը, ի՞նչպէս էք կարծում, կարո՞ղ ենք ճանապարհ ընկնել չսպասելով նոցա։

— Ինչպէս և լինի, պատասխանեց Նոննը, փոխանակ այստեղ սպասելու մինչև գարունը ամբողջ զօրքին, լաւ է գնալ այժմ իսկոյն, մինչև անգամ մի միայնակ։

— Այո՛, ի հարկէ, ասաց Ռոբէրը, պատասխանելով աւելի իւր մտքերին, քան թէ իւր խօսակցի ասածներին։ — Եթէ այդ ուղիղ է, մեզ պէտք չէ ուշանալ։ Գնում ենք, գնում ենք... Տեսնենք ի՞նչ կասէ մեզ Դը-Մոնսը։

— Ի՞նչպէս են ընթանում մեր պատրաստութիւնները, սիր-ելի Մատիօ։

— Հաւատացնում եմ ձեզ, որ անկարելի է կատարել բոլոր գործերը մի օրում, պատասխանեց նա. բայց և այնպէս ամեն բանը գնում է հսկայական քայլերով։ Յոյս ունեմ, որ շուտով բոլորովին պատրաստ կլինինք։ Ընտրութիւնը շատ դժուար է։ Զինագործները ոչինչ չեն հասկանում իւրեանց արուեստի մէջ ամենքը խարդախ են և խաբեբայ, արժան էր կախ տալ նոցա։ Երեկ երեկոյին գնեցի երեք ձի, այսօր նայում եմ — մէկը կոյր է, միւսը քոռացած, երրորդը վնասուած ջրից։ Ես էլ վերադարձրի նոցա իւրեանց տէրերին, տալով և հարիւրական գարկ փայտով, իբրև յաւելուած։

— Ա՛խ, ասաց Ռոբէրը, ահա՛ թէ ինչու համար Նոննը ասում է, թէ դու նման ես մի նորան ծանօթ կնոջ, որ ցերեկը կտաւ է գործում, իսկ գիշերը քանդում է։

— Ես հանաք էի անում, ասաց Նոննը, կարմրելով։

— Ճշմարիտ է, պատասխանեց դը-Մոնսը, նոյնպէս կարմրելով. — ես շատ խիստ եմ ընտրութեան մէջ, կազմելով մեր թիկնապահ գունդը։ Ես ցանկանում եմ որ զօրքը արժանի լինէր ուղեկցել ձերդ բարձրութեան։ Ես չեմ կամենում ճանապարհ հանել ձեզ կաղ զինուորներով կոյր ձիերի վերայ։

— Նոննը ասում է, թէ փոխանակ սպասելու զօրքի կազմելուն, աւելի լաւ է, որ գնանք առանց թիկնապահների։

—Ինձ թւում է թէ՝ պարոն Նոննը շատ է շտապում։ Երևի նա կամենում է, որ դուք անցնէք ամբողջ Եւրոպայով ինչպէս մի բախտախնդիր ոմն։ Մի՞թէ նա կամենում է, որ դուք հասնէք ձեր երկիրը և անձնատուր լինիք ձեր հպատակներին, սպասելով թէ.—կբարեհաճի՞ն արդեօք նոքա ընդունել ձեզ կամ դուրս անել։

—Բայց, գիտե՞ս դու արդեօք թէ ի՞նչ է լսել Նոննը Պելոպոնէսում, ասաց Ռոբէրը։ Եթէ ես մինչև գարունը չեմ հասնի այնտեղ, իմ հօրեղբօր խոստմունքին համաձայն, իշխանութիւնը կդառնայ Վիլլարդուինի սեփականութիւն։

—Առակներ, գոչեց Դը-Մոնսը, փոքր ինչ դեղնելով և հաղելով։ Ցայտնի բան է առակներ. միթէ այդ կարելի՞է։

—Ինձ էլ նոնպէս անկարելի է թւում։ Բայց, ինչպէս Նոնն է ասում, եթէ մենք կհասնենք Պելոպոնէս աւելի շուտ, դորանով ոչինչ չենք կորցնի, իսկ եթէ կհասնենք շատ ուշ—կարող ենք ափսոսալ։ Ուստի ես կերթամ մենակ։

—Ես բոլորովին համաձայն եմ պարոն Նոննի կարծիքի հետ, ասաց Մատիօն, նկատելով թէ, որ կողմից է փչում քամին։—Այո, ի հարկէ, ձերդ բարձրութիւնը պէտք է ճանապարհ ընկնի, և որքան աւելի շուտ, այնքան աւելի լաւ։ Գնալ առանց թիկնապահ զօրքի, իմ կարծիքով, մեծ սխալմունք և մեծ անբախտութիւն կլինէր։ Մենք կմտնենք մի երկիր, որը գուցէ թշնամի է մեզ, ուր հարկաւոր էր երևալ ձեզ հզօր դիրքով, որը կարող լինէր երկիւղ ազդել։ Մենք կանցնենք մեզ բարեկամ երկրներով, ուր դուք պէտք է երևաք արժանաւոր կերպով, որպէս զի յարգանք ազդէք։

—Բայց այնուամենայնիւ մի տեղ հասնելու համար հարկաւոր է ճանապարհ ընկնել, ասաց Նոննը։

—Ես էլ միևնոյնն եմ ասում, պատասխանեց Դը-Մոնսը։ Որքան և շատ հարկաւոր լինէր թիկնապահ զօրքը, ես կառաջարկէի չսպասել նորան, եթէ նա չլինէր պատրաստ։ Բայց բարեբախտաբար....

—Կլինի՞ արդեօք մի շաբաթից յետոյ, հարցրեց Ռոբէրը։

—Երեք օրից յետոյ, պատասխանեց Դը-Մոնսը։

—Ուրեմն մենք կերթանք չորս օրից յետոյ։

—Եւ եթէ եղանակը բարեյաջող կլինի, ասաց Դը-Մոնսը, քսան օրից յետոյ մենք Պելոպոնէսում կլինինք։

—Բայց եթէ եղանակը անյաջող կլինի, նկատեց Նոնը, որ սիրում էր միշտ հակաճառել Դը-Մոնսին, — իսկ ձմերային ժամանակի պատճառով պէտք է ենթադրել այդ, — մենք կհասնենք միայն երեք ամսից յետոյ։

—Ո՛հ, գոչեց Ռոբէրը, ես չեմ կամենում ենթարկել իմ անձս այդպիսի վտանգին և ամենևին տրամադրութիւն չունիմ մաքառել ալիքների հետ ամբողջ ձմեռը։ Ո՞րքան ժամանակ է հարկաւոր ցամաքով Պելոպոնէս հասնելու համար։

—Տասնևհինգ օր մինչև Վենետիկ, իսկ այնտեղից այնուամենայնիւ կհարկաւորի գնալ ծովով, պատասխանեց Դը-Մոնսը։

—Ո՛ր ծովով, ասաց Նոնը։ Ի՞նչ է Ադրիատիք ծովը — մեծ նաւահանգիստ։ Ձմեռը այնտեղ փչում է միշտ հիւսիսային հողմը։ Վենետկից մինչև Մորէ կարելի է հասնել մի երկու շաբաթում։

—Իսկ ցամաքային ճանապարհը վտանգաւոր չէ, հարցրեց ապագայ իշխանը։

—Սավոյայում մենք պէտք է անցնենք Ալպեան լեռների վրայով, ասաց Դը Մոնսը։

—Ալպերի վրայով։ Բայց ի՞նչ են Ալպերը, գոչեց Նոնը, —լեռներ, որպէս և ուրիշ լեռները։ Իսկապէս, միշտ բարձրանում ես սարը. Ալպերը անմատչելի չեն և լաւ ճանապարհներ ունին։ Գուցէ նոցա վերայ կլինի ոչ սակաւ ձիւն, բայց դա ինչ արգելք է։ Մենք ունինք զինուորներ, նոքա կմաքրեն ճանապարհը։

—Ես էլ այդպէս եմ կարծում, ասաց Ռոբէրը։

—Եթէ դուք էլ միևնոյն կարծիքի էք, ես ոչինչ չեմ կարող ասել դորա դէմ, ասաց Դը Մոնսը։ Մանաւանդ որ ճանապարհը Վենետկի վրայով ներկայացնում է նաև երկու մեծ յարմարութիւն։ Առաջին՝ դուք բարեկամական յարաբերութիւններ կկապէք Դոժի հետ, որ և ձեզ հարկաւոր է, երբ կսկսէք վարել իշխանութիւնը։ Երկրորդ՝ Վե-

նետկում կարելի է գտնել լաւ նաւեր, որոնք արագութեամբ կհասցնեն Պելոպոնէս։

—Ուրեմն, վիճակը ձգած է, գոչեց Ռօբէրը։ Չորս օրից յետոյ մենք գնում ենք ցամաքով։ Ուստի պատրաստ կացէք ճանապարհ ընկնելու համար։

—Ես բոլորովին պատրաստ եմ, ասաց Մատիօն, իսկ զինուորները պատրաստ կլինին երեք օրից յետոյ։

—Գնալով Դը-Մօնսը մտածեց.

—Քսան և ութը օր յափշտակուած է և չորս օր էլ գրպանում կայ. մնում է հարիւրուերեսունն։ Բայց ինչ որ դոցա է վերաբերում...։ Է՛հ, Աստուած ողորմած է։

8

ՌՕԲԷՐ ԴԸ-ՇԱՄՊԼԻՏԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ։

Ճանապարհ ընկնելը կատարուեցաւ յիրաւի նշանակած օրը, —Նոյեմբերի երեքին։

Մի անգամ ճանապարհ ընկնելով, Ռօբէրը սաստիկ շտապում էր. նա շատ պայրանում էր հանդիպելով ուշանալու դէպքերին, որ պատահում էին Դը-Մօնսի ձեռքով պատրաստած թիկնապահ զօրքի պատճառով։ Մին հետևակ զինուորները, ձանձրացած ճանապարհից, յետ էին մնում. մին՝ ձիերը կորցնում էին իւրեանց պայտերը (նալերը). շատ անգամ հարկաւորում էր նորոգել մինչև անգամ ձիու ամբողջ սարքը։ Բայց այնուամենայնիւ Դը-Մօնսը կարողանում էր շուտով կարգի բերել այդ բոլորը, այնպէս, որ հանան Սավոեա, Ալպերի մօտ, ութ օրից յետոյ։

Այդտեղ որոշած էր հանգստանալ մի օր, և այդ կարճատև հանգստութեան ժամանակ մտադրութիւն կար ժողովել հարկաւոր տեղեկութիւններ սարերի վրայով անցնելու մասին։

Բայց ժողոված տեղեկութիւնները շատ մխիթարական չէին։ Ճանապարհները անանցանելի էին, չորս կանգուն ձիւնով ծածկած։

—Այդ բոլորը չափազանցութիւններ են, գոչեց Դը-Մօնսը։ Հեռուից ամեն բան խոշոր է երևում. քանի խոր է

ձիւնը, այնքան պինդ է։ Հօ չենք կարող սպասել մինչև յուլիս ամիսը երբ կհալուի ձիւնը։ Ես հաւատացած եմ, որ մենք կարող ենք անցնել։ Ո՞վ է մեզ արգելում փորձել։ Եւ վերջապէս մեզ ուրիշ ճար էլ չէ մնում։

Այդ քաջալերող խօսքերը ախորժելի էին Ռօբէրին, որովհետև բոլորովին համաձայն էին նորա սեփական մըտքերին։ Ուստի հետևեալ օրը նոքա սկսեցին բարձրանալ սարը։ Բայց կէս ժամից յետոյ նոքա արդէն ստիպուած էին կանգ առնել. երեք առաջնորդող ձիաւորների ձիերը թաղուեցան ձիւնի մէջ։ Չորս ժամ հարկաւորեցաւ մինչև որ հանեցին նոցա և ազատեցին անխուսափելի մահից։

Ճանապարհորդները շուտով համոզուեցան, որ անհնարին էր անգամ մի քայլ առաջ գնալ այդ ճանապարհով։ Նոցա առաջև ձիւնը դիզուած էր բարձր բլուրներով, իսկ նոցա գլխի վերայ բարձր լեռները հասնում էին մինչև ամպերը ինչպէս բիւրեղի բուրգեր։ Ստիպուեցան ամբողջ օրը մնալ մի տեղում և յետոյ վերադառնալ երեկուան իջևանը։ Միւս օրը նոր փորձերը ցոյց տուին, որ ուրիշ ճանապարհներն աւելի անանցանելի էին, և բացի դորանից՝ աւելի վըտանգաւոր, որովհետև անցնում էին ձորերով, որոց ափերը, ձիւնով ծածկուած լինելով խառնուում էին ճանապարհի հետ։

Դարձեալ մի օր կորաւ։

Երեկոյին խորհուրդ կազմեցին, և դը·Մօնսը առաջարկեց քերել ձիւնը։ Բայց զինուորների նիզակները բաւական չեղան այդ գործի համար. հարկաւոր էին թիեր։ Հետևեալ օրը անցաւ թիեր պատրաստելու մէջ մերձակայ գիւղերում։ Գործը շարունակւում էր երկու օր և միայն երկրորդ օրը երեկոյեան ամենավտանգաւոր տեղերը փոքր ինչ յարմարութիւն ստացան անցնելու համար։ Ճառեցին՝ առաջ գնալ հետեւեալ օրը։

Տարաբախտաբար, գիշերը ձիւն եկաւ և այն տեղերում՝, ուր չորս կանգուն ձիւն կար, այժմ վեց կանգուն էր։

Ճանապարհորդների յուսահատութիւնը անկարագրելի էր։ Ամբողջ հետևեալ օրը անցաւ խորհրդակցութեանց մէջ. ընդունում էին և մերժում մին միւսի յետևից միմեանց ամենահակառակ կարծիքները։

—Ա՛խ, երանի ինձ լսէիք, ասում էր դը-Մօնսը, աչքերը երկինք բարձրացնելով։ Եթէ ձերդ բարձրութիւնը ընտրէր ծովային ճանապարհը, այժմ, գուցէ, մենք արդէն Պելոպոնէսում լինէինք։

Ռօբէրը ճեմում էր իւր վրանի մէջ արագ քայլերով։ Վերջապէս նա կանգնեցաւ դը-Մօնսի առջև։

—Ծովային ճանապարհը, գոչեց նա։ Այո, իզուր չը-գնացինք ծովով։ Այնտեղ գոնէ չես հանդիպի այնպիսի յանդուգն սարերին, որ հպարտ բարձրանում են առջևդ, ծաղրում են ջանքերդ և ստիպում ամբողջ ամիսներով կանգնած մնալ իւրեանց առջև, ձեռքերը կցած, անգործ։ Փոխանակ մնալու այստեղ մինչև ի կատարած աշխարհի, ես առաջարկում եմ, լաւ է վերադառնալ և գնալ ծովով։ Դուք ի՞նչ կասէք, պարոնները։

Ոչ ոք չհամաձայնուեց այդ կարծիքի հետ։ Բայց երբ առաջարկուեցաւ ամեն մէկին յայտնել մի ուրիշ կարծիք, ամենքը լուռ մնացին։

—Ուրեմն, վաղն իսկ մենք կվերադառնանք, ասաց Ռօբէրը, և կհասնենք աւելի մօտիկ նաւահանգստին։ Երբ մարդս գնում է, գոնէ յոյս կայ տեղ հասնելու. իսկ երբ կանգնած ես մի տեղում՝ այդ յոյսն էլ կորչում է։

Բայց միւս օրը եղանակը հիանալի էր, երկինքը պարզ, արեգակը բաւական տաքացնում էր, քամին փչում էր հարաւից և ձիւնը հալել էր սկսում։ Փոքրիկ բանակը ոգեւորուեցաւ. էլի մի այդպիսի օր—և կարելի կլինէր առաջ գնալ։

Եւ յիրաւի լաւ եղանակը շարունակվում էր, և երրորդ օրը նորից սկսեցին սարը բարձրանալ։ Ձիւնն աւելի կակուղ էր և շատ տեղերում հալում էր, կազմելով վըտակներ և հեղեղներ։

Կէսօրից յետոյ, երբ փոքր կարաւանը գնում էր սարի վերայ, բարձր տեղում, յանկարծ լսուեցաւ գլխի վերայ կարծես ասպի երկարատև գոռոց։ Կարծես թէ ամբողջ սարը դողաց, և շուտով ձիւնի ահագին հոսանքը, սարսափելի աղմուկով և ճայթմունքով, իջաւ և ծածկեց բոլոր ճանապարհը, որը անցել էին մեր ճանապարհորդները։ Եթէ

տասը բոպէ առաջ ընկնէր այդ հոսանքը, Ռոբէրը և իր ուղեկիցները թաղուած կմնային ձիւնի տակ։

Սարսափած, ճանապարհորդները շտապեցրին քայլերը, լուռ. նոցա աչքերը անդիտակցաբար ուղղուած էին նոցա գլխին բարձրացող սպիտակ գագաթների վերայ, նոքա կարծում էին, որ այդ գագաթները ահա իսկոյն փուլ կգան իւրեանց վերայ։

Երեկոյեան դէմ նոքա հասան մի փոքր հովիտ, ուր կանգնած էին, գրեթէ բոլորովին ձիւնի մէջ թաղուած, Ալպեան հովիւների երեք չորս խրճիթը։ Այդտեղ ճանապարհորդները գիշերեցին, մտադիր լինելով շարունակել ճանապարհը միւս օրը արեգակի ծագելուց առաջ։ Բայց հովիւները հաւատացնում էին, որ այդ մտադրութիւնը անիրագործելի է, որովհետև ձիւնի ընկած հոսանքները բոլորովին խափանել են բոլոր ճանապարհները։

—Առ հասարակ, ասաց լեռնականներից մէկը, այստեղի ճանապարհը շատ դժուար է ամբողջ ձմեռը։ Երբ ձիւն է գալիս, ճանապարհները անանցանելի են դառնում. իսկ երբ եղանակը տաքանում է, սարերից ընկնում են ձիւնի ահագին կոյտեր, որ կարող են թաղել Իւրեանց տակ հազարաւոր մարդիկ։ Մենք ինքներս փակւում ենք այս խրճիթների մէջ մի քանի ամսի պաշարով և շատ քիչ ենք դուրս գալի տանից մինչև ծիծեռնակների գալը։

—Բայց ե՞րբ են գալի ծիծեռնակները։

—Մարտին։

Ամենքը սարսափեցին։

—Ցուսահատութիւն, գոչեց դը-Մոնսը։ Ամբողջ երեք ամիս մնալ այս նզոված տեղում։ Ա՛խ, երանի՜ ինձ լսէիք։ Եթէ մենք գնայինք ծովո՜վ։

—Երեք ամիս. ես չեմ մնայ այստեղ մինչև անգամ երեք օր, ասաց Ռոբէրը։

—Եթէ հնարք լինէր, մենք այստեղ երեք ժամ անգամ չէինք մնայ, ասաց դը-Մոնսը։ Եւ յիրաւի, որ այս ձմերային թագաւորութեան մէջ շատ ուրախ չէ կեանքը։ Բայց ամենից առաջ հարկաւոր է հոգալ, որ ձերդ բարձրութիւնը չենթարկուի որևիցէ վտանգի, եթէ մենք ստիպուած լինէինք մնալ Ալպերի ձիւնի տակ մինչև անգամ ամ-

բողջ կէս տարի։ Առ ժամանակ մենք բաւական պաշար ունինք, բայց ինձ թւում է որ՝ ձերդ բարձրութեան պէտք չէ անզգոյշ լինել։ Մօրէի ամենագլխաւոր ցանկութիւնն է, իմարկէ, որ դուք հասնէք այնտեղ ողջ և անվնաս։

Ռոբէրը գոչում էր և մռնչում յուսահատութիւնից. Նոնը հառաչում էր. բայց ոչ գոռում գոչումը, ոչ հառաչանքը չէին կարող դէպի լաւը փոխել նոցա ողբալի դրութիւնը։

Երեք օր նստած էին նոքա ինչպէս պաշարեալներ։ Չորրորդ օրը, Նոնի ստիպմամբ շարունակեցին ճանապարհը։ Նոնը, կարծես թէ, միայն մի նպատակ ունէր — հասնել տեղը, իսկ արգելքների և վտանգների մասին չէր մտածում անգամ։

Հովիւներից ամենավստահները յանձնառու եղան առաջնորդել նոցա։ Ամեն քայլի վերայ առաջ էին գալիս նոր վտանգներ, դժուարութիւններ, և արգելքներ։ Շատ անգամ ստիպուած էին լինում բահերով մաքրել ճանապարհը. երբեմն երբեմն լսւում էին ամպի գոռոցի նման ձայներ — ձիւնի հոսանքներ էին թափւում մերձակայ ձորերի մէջ։ Պատահում էր նոյնպէս մեր ճանապարհորդներին ամբողջ օրեր անցնել լեռնային խրճիթների մէջ, կամ վրաններ բանալ խոր ձորերում։

Շամպլիտի ուղեկիցները բաժանւում էին երկու կուսակցութեան. մէկը աւելի գերադաս էր համարում ճանապարհորդութեան ապահովութիւնը քան թէ արագութիւնը. այդ կուսակցութեան հետ միացաւ դը-Մոնսը. և գուցէ նա իսկ էր դորա շարժողը։ Միւս կուսակցութիւնը գերադաս էր համարում արագութիւնը և չէր կամենում ուշադրութիւն դարձնել վտանգների վերայ. այդ երկրորդ կուսակցութեան պարագլուխն էր Նոնը։ Ռոբէրը փոփոխաբար հակւում էր մերթ մին, մերթ միւս կուսակցութեան կողմը և հաւասարակշռութիւն էր պահում նոցա մէջ։

Վերջապէս, տասնօրեայ ձանձրալի ճանապարհորդութիւնից յետոյ նոքա հասան սարի գագաթը, որտեղից կարելի էր տեսնել Հովիտների զմայլելի տեսարանը, ուր նուաղող ձմեռն արդէն բացում էր իւր գիրկը գարնան համար, ուր քամին աւելի տաք էր, և նորաբողբոջ բուսականու-

թիւնը վիճում էր անհետացող ձիւնի հետ։ Ճանապարհորդները ուրախ և ոգևորուած իջնում էին Ալպեան սարերից։ Ուրախութիւնը և անհամբերութիւնը սիրտ էին քաբախեցնում։ Այդ օրը թւում էր փրկութեան օր։

Միայն դը-Մոնսը ինչ որ համարում էր մատներով և քրթմնջում էր քթի տակ.

—Այս նոնը կարծես թէ դիւահար է։ Եթէ սա չլինէր, մենք մինչև այսօր նստած կլինէինք գեղեցիկ ալպեան հովիտում, անմեղ հովիւների հիւրասէր յարկի տակ, սպասելով ծիծեռների առաջին ճռվողելուն։ Ալպերի վերայ էի հիմնում ես իմ լաւագոյն յոյսերս, բայց Ալպերը ահա մնացին մեր ետևից։ Դեռ ևս հարիւր օր կայ։ Հարիւր օր, այսինքն՝ երեք ամիս և տասը օր։—Դէ, սիրելի Վիլլարդուին, ես շատ վախենում եմ....

Եւ դը-Մոնսը մտածմունքի մէջ ընկաւ։ Այդ միջոցին նորա մօտից անցնում էր Ռօբէրը։

—Ձերդ բարձրութիւն, ասաց դը-Մոնսը, այժմ կարելի է ասել, որ մենք արդէն Վենետիկումն ենք. ոչ մի բան չէ կարող մեզ արգիլել հասնել այնտեղ մի շաբաթից յետոյ։ Ուստի հարկաւոր է մարդ ուղարկել առաջուց Վենետկի հասարակապետութեան զգուշութեամբ տեղեկութիւն տալու համար մեր գնալու մասին։ Ապա թէ ոչ՝ կարող են և ծուռը մեկնութիւն տալ այսքան զինուորներով գնալուն։

—Ուղիղ ես ասում, ասաց Ռօբէրը, այդ անպատճառ հարկաւոր է։ Բայց ո՞ւմ ուղարկել... քեզ, Մատիօ,—Վենետիկը քեզ լաւ ծանօթ է։ Ցանկանո՞ւմ ես արդեօք յանձն առնել այս յանձնարարութիւնը։

—Ես միշտ պատրաստ եմ ծառայել ձերդ բարձրութեան, պատասխանեց դը-Մոնսը, և չսպասելով նոր կարգադրութիւններին, նա մտրակեց իւր ձին և վազեց առաջ։

Մի շաբաթից յետոյ Պելոպոնէսի ապագայ իշխանը իւր ուղեկիցներով հասաւ Վենետիկ։

Երեք մղոն քաղաքից դուրս ընդ առաջ եկաւ նորան հրաւիրակ դեսպանը դը-Մոնսի հետ միասին։ Դեսպանը յանձնեց Ռօբէրին Դոժի նամակը, շնորհաւորեց յաջողութեամբ ժամանելը և հրաւիրեց մուտք գործել քաղաք։

Մի երկու ժամից յետոյ ճանապարհորդներին դիմաւորեց

մի գունդ հեծելազօրք։ Գնդապետը իջաւ ձիուց, յարգանքով ողջունեց Ռօբէրին, յայտնեց, որ ինքը Վենետկի քաղաքապետն է և հրաման է ստացել Դոժից ընդունել քաղաքի մէջ նորին բարձրութիւնը։

Ռօբէրը յայտնեց իւր շնորհակալութիւնը Դոժին այդպիսի ուշադրութեան և հիւրասիրութեան համար, խնդրեց քաղաքապետից ձի նստել և շարունակեցին ճանապարհը։ Քաղաքապետը հրաւիրեց Ռօբէրին իւր գիւղը համեստ ճաշի, և նա ընդունեց հրաւէրը։

Նոքա մօտեցան մի մեծաշուք պալատին, ընդարձակ և հոյակապ պարտէզով։ Բազմաթիւ երևելի ասպետները ըսպասում էին այնտեղ ֆրանսիական իշխանին։ Ընդունելութեան և ծանօթողական ներկայացման հանդէսը շարունակուեցաւ երկու երեք ժամ։ Ցետոյ իշխանին տարան առանձին սենեակ հանգստանալու։

Ցետոյ նստեցան ճաշի, որ շատ փառաւոր էր ինքնըստ ինքեան և աւելի ևս ճանապարհորդների համար, որ այնքան ժամանակ թափառում էին Ալպեան լեռների ձիւնի մէջ։ Ճաշը տևեց մինչև երեկոյ. և երբ մթնեց, հիանալի ճրագալոյցը լուսաւորեց քաղաքապետի տունը և պարտէզը։ Կէս գիշերին հիւրերը ցրուեցան և քաղաքապետը ներկայացաւ Ռօբէրին նորին բարձրութեան պատուէրները ստանալու համար հետևեալ աւուր մասին։ Ռօբէրը սրտագին շնորհակալութիւն մատոյց նորան և յայտնեց, որ ցանկանում է հետևեալ իսկ առաւօտը մտնել Վենետիկ և առանց յետաձգութեան գնալ Պելոպոնէս։ Քաղաքապետը յարգանքով գլուխ տուեց և դուրս գնաց։

Հետևեալ օրը, Ռօբէրը շորերը հագնելուց յետոյ իսկոյն պահանջեց մի նաւակ նեղուցը անցնելու համար։ Քաղաքապետը ներկայացաւ և յայտնեց, որ նաւը պատրաստ է և իշխանը կարող է նաւ մտնել մի թեթև նախաճաշ վայելելուց յետոյ։ Այդ առաջարկութիւնը այնպէս քաղաքավարի էր և այնպէս յարմար, որ Ռօբէրը ընդունեց յօժարութեամբ։

Համեստ նախաճաշը կազմած էր տարուայ եղանակի ամենահաղուագիւտ նիւթերից. մանաւանդ առատութեամբ հոսում էր հիանալի կիպրոս գինին։ Նախաճաշը քաշեց մին-

չև կէսօրը։ Նախաճաշի վերջում քաղաքապետին մատուցին Դօժի նամակը, որ և իսկոյն ներկայացրեց Ռօբէրին։

Դօժը գրում էր թէ՝ կամենալով ընդունել իշխանին բոլոր արժանավայել պատուով, խնդրում է նորանից սպասել նաւերին, որ նա կուղարկէ հետևեալ առաւօտը, և այդ միջոցին կտեսնէ ամեն հարկաւոր պատրաստութիւնները բարձրապատիւ հիւրին ընդունելու համար։

Ռօբէրը ապշած էր ուրախութիւնից. նա կարծես թէ աւելի բարձրացաւ մի քանի թիզ, և պատասխանեց թէ՝ երբ կհասնի իւր իշխանութեան երկիրը, չի մոռանայ իւր եղբայր Դօժի ցուցած ընդունելութիւնը և պատիւը, եթէ նոցա բոլոր ապագայ յարաբերութիւնները կունենան ներկայ բախտաւոր սկզբնաւորութեան համապատասխանող ընթացք։

Հետևեալ օրը շատ վատ էր եղանակը, և Դօժը յատուկ դեսպանով յայտնեց, որ չէ կամենում վտանգի ենթարկել իւր սիրելի եղբօր անձը և թէ բացի դորանից՝ այդպիսի եղանակին անկարելի է կատարել այն փառաւոր ընդունելութիւնը, որով ցանկանում է ինքը ընդունել իշխանին։

Հարկ եղաւ մնալ և այդ օրը։ Նօնը կրծում էր իւր եղունգները. բայց Ռօբէրը մտքով անդամ չէր կարող անցկացնել հրաժարուիլ առաջարկուած պատիւներից մի որևիցէ երկու երեք օր կորցնելու պատճառով։ Միթէ արժէ՞ր այդպիսի չնչին բանի համար խանգարել թագաւորների մէջ ընդունուած քաղաքավարութիւնը, որոց շարքում հազիւ նոր էր բռնել իւր տեղը։

Վատ եղանակը շարունակւում էր երեք օր։ Դօժը անդադար հրամաններ էր ուղարկում քաղաքապետին ցոյց տալ իշխանին ամեն տեսակ պատիւներ, մինչև որ կարելի կլինի ուղարկել նաւերը նորին բարձրութեան համար։

Չորրորդ օրը առաւօտը տասը գեղեցիկ նաւեր, դրօշակներով և ոսկեփունջ վարագոյրներով զարդարած, սուրբ Մարկոսի դրոշակը ծածանած, սպասում էին Ռօբէրին քաղաքապետի տան առջև։ Ինքն քաղաքապետը ներս տարաւ Ռօբէրին սպիտակ ոսկեզօծ և ծիրանազարդ նաւը և նստացրեց իւր կողքին ոսկեճամուկ բարձերի վրայ։ Միւս նաւերի

մէջ տեղաւորուեցան իշխանի ուղեկիցները, իսկ մէկ նաւ սահում էր ամենից առաջ փողահարներով և երաժիշտներով։ Ճանապարհ ընկան կազմ կարգով և հանդէսով, և թիերը ծփալով սահեցնում էին նաւերը Վենետկի ծովածոցի հանդարտ և վճիտ մակերևութի վերայ։

Երբ նաւերը հասան ափին սուրբ Մարկոսի հրապարակի մօտ, բոլոր նաւերը և նաւակները իսկոյն զարդարուեցան գունդգոյն դրօշակներով, և բոլոր եկեղեցիներն հնչեցրին օդը ուրախութեան զանգակահարութեամբ։

9.

ՎԵՆԵՏԿԻ ԴՕԺԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՌՕԲԷՐԻՆ

Ռօբէրին տարան ուղղակի Դօժի պալատը։ Դօժը դիմաւորեց նորան լայն, մարմարաշէն սանդուղքի գլխին և մտնելով Ռօբէրի թևի տակ տարաւ նորան ընդունելութեան դահլիճը։ Այնտեղ սպասում էին նոցա Վենետկի բոլոր երևելի անձինքը։ Դօժի և Պելոպոնէսի ապագայ իշխանի մըտնելու ժամանակ ամենքը յարգանքով ոտի կանգնեցան։ Դօժը նստացրեց իշխանին իւր մօտ աջ կողմից և վարւում էր նորա հետ իբրև իւրեան հաւասարապատիւ մարդու հետ։ Այդ հանդիսաւոր տեսակցութիւնից յետոյ Ռօբէրին տարան մի հոյակապ պալատ, ուր պատրաստուած էր նորա համար բնակարան. այնտեղ նորան սպասում էր համադամ ճաշ։

Ամբողջ հետևեալ օրը Ռօբէրը ստիպուած էր ընդունել այցելութիւններ, և դը-Մոնսը հաւատացրեց նորան, որ տեղական քաղաքավարութիւնը պահանջում է կատարել փոխադարձ այցելութիւններ։

Ընթրիքից յետոյ նոքանը ասաց, որ ժամանակ է մտածել և գնալու մասին. բայց որովհետև արդէն ուշ էր, որոշեցին խօսել այդ հարցի մասին հետևեալ օրը և տալ որ և իցէ վերջնական վճիռ։

Սակայն հետևեալ առաւօտը Ռօբէրին պաշտօնական կերպով յայտնեցին, որ Դօժը պիտի այցելութիւն անէ նորան։ Պէտք էր աշխատել արժանաւոր կերպով ընդունել

Դոժին և ակամայ կամաք հարկ եղաւ յետաձգել գնալը։ Դոժը եկաւ ճաշից յետոյ, մնաց Ռոբէրի մօտ երկու ժամի չափ, խօսում էր նորա հետ նորա հօրեղբօր — Վիլհելմ դը-Շամպլիտի մասին, Շամպանիայի, Ֆրանսիական թագաւոր Փիլիպպոս Օգոստոսի, Պելոպոնէսի մասին, և գնալու ժամանակ հրաւիրեց նորան իւր մօտ ճաշի հետևեալ օրը։

Երեկոյին նոննը դարձեալ խօսք բացեց երեկուան առաջարկութեան մասին։

— Տարաբախտաբար, պատասխանեց Ռոբէրը, մենք չենք կարող ճանապարհ ելնել վաղը, որովհետև մենք պէտք է ճաշենք Դոժի մօտ։

— Աստուած տա՛յ, որ այդ հրաւէրքները չպահեն ձեզ Վենետկում ամբողջ ձմեռը։

— Բայց ո՞րպիսի բարեձև պատճառով կարող ենք մերժել Դոժի հրաւէրքը, պատասխանեց Ռոբէրը։ Սակայն այդ ճաշից յետոյ ոչ մի բան մեզ արգելք չի լինի ճանապարհ ընկնելու։ Զէ՞ որ մենք առաջներս ունինք դեռ ևս ամբողջ երեք ամիս, իսկ այստեղ մենք գրեթէ Մօրէի դրան առաջն ենք։

Հետևեալ աւուր ճաշը ի պատիւ Ռոբէրի շատ փառաւոր էր։ Ծննդեան պասի պատճառով թէպէտ միս չկար, բայց Միջերկրական ծովի ամենահազուագիւտ ձկները և ծովային ուտելու կենդանիները շարժեցին ամենքի զարմանքը։ Ամեն տեսակ պտուղները և գինիքը — այն ժամանակ յայտնի աշխարհքի երեք մասի արտադրութիւնները — երևում էին սեղանի վերայ։

Ռոբէրը բազմեցրած էր ամենապատուաւոր տեղում իւր մեծափառ ասպնջականի կողքին. բոլոր պատիւները, բոլոր ուշադրութիւնը յատկապէս նորան էին նուիրուած։

Ճաշի ժամանակ Դոժը ներողութիւն խնդրեց Ռոբէրից այդպիսի համեստ սեղանի համար, ասելով թէ պասի պատճառով անկարելի էր առաջարկել նորան աւելի լաւը և իսկոյն յայտնեց, որ մօտակայ ծննդեան տօնին նա կաշխատէ պատրաստել աւելի փառաւոր խնջոյք, վասնորոյ այժմէն իսկ հրաւիրեց նորան։

— Ես հազիւ թէ կարողանամ մնալ մինչև այդ ժամանակ, անորոշաբար ասաց իշխանը։

—Ի՞նչպէս, բացականչեց Դօժը, մինչև Ծննունդը մընում է ընդամենը միայն չորս օր, և դուք չէք կամենում նուիրել մեզ դոյա։ Մի՞թէ դուք կերթաք մեր մօտից այս հնչին ձկների համը քերանում և այդպիսի թերի գաղափարով մեր հիւրասիրութեան մասին։ Ո՛չ, Աստուած չանէ այդ։ Ես արդէն գրեցի սրբազան պատրիարգին, որ այժմ բացակայ է, և խնդրեցի, որ գայ Ծննդեան տօնին Վենետիկ և պատարագ մատուցանէ մեզ մօտ։ Կյուսամ, որ դուք չէք զրկի մեզ այդ պատուից։

Ռօբէրը նայեց առաջ Նօննի վերայ. նա աչքերը ցցեց իւր ամանի վերայ և կարմրեցաւ ինչպէս եփած խեցգետին, որը նա ուտում էր այդ րոպէին։ Յետոյ Ռօբէրը նայեց դը-Մօնսի վերայ և հանդիպելով նորա նայուածքին՝ նա հասկացաւ այդ նայուածքի միտքը, և թեթև կերպով գլուխը շարժելով իբրև համաձայնութեան նշան՝ ասաց Դօժին թէ շնորհակալութեամբ ընդունում է նորա առաջարկութիւնը։

Երեկոյին Ռօբէրը փոքր ինչ անվստահութեամբ մօտեցաւ Նօննին։

—Անհնարին էր ինձ հրաժարուել հրաւէրքից, ասաց նա. պատրիարքը հրաւիրուած է յատկապէս ի պատիւ իմ... Այդպէս չէ՞, իմ սիրելի Նօնն։

Նօնը փնչում էր ձիու պէս և մռմռում քթի տակ։

—Բոլորովին ուղիղ է..., ոհ, ի հարկէ։ Յետոյ, ի՞նչպէս Դօժի հետ չհանդիպել և նոր տարուն. իսկ այնուհետև հեռու չէ և Զատիկը։ Ուրեմն մենք և Զատկին Վենետկում կլինինք, իսկ յետոյ ճանապարհ կընկնենք անպատճառ Համբարձումին։ Խորհուրդ եմ տալի ձեզ իշխան, սպասել մինչև Համբարձումը։

—Դէ՛, դու արդէն բարկանում ես։

—Ամենևին։ Ես միայն ասում եմ, որ ձերդ բարձրութիւնը կարող է մնալ այստեղ մինչև որ կտեսնէ թէ ինչպէս երևելի Դօժ Պիէտրո Ցիանին կկատարէ իւր նշանադրութեան հանդէսը իւր երևելի հարսնացուի—Ադրիատիք ծովի հետ։ Սպասենք մինչև Համբարձումը. չէ՞ որ այդ օրը պապը յանձնեց նշանադրութեան մատանին այժմեան Դօժի պապին—Դօժ-Սեբաստիանին։

— Միամիտ կացիր, իմ սիրելի Նոնն. ես մի օր անգամ աւելի չեմ մնայ այստեղ Ծոնդից յետոյ։ Խօսք եմ տալի քեզ, որ հետևեալ օրը մենք անպատճառ ճանապարհ կելնենք այստեղից։

Չորս օր անցան Ռոբէրի և նրա ուղեկիցների համար, մինչև անգամ մռայլոտ Նոնի համար, ինչպէս չորս վայրկեան, որովհետև Վենետկի բարձր դասակարգը ամեն կերպով աշխատում էր պատուել և զուարճացնել նոցա ամեն տեսակ ուրախութիւններով և փառաւոր ճաշերով ու ընթրիքներով։

Իսկ Ծոնդեան տօները կարող էին յափշտակել Ռոբէրից աւելի ծանրաբարոյ մարդուն։ Սուրբ Մարկոսի հոյակապ տաճարում, Վենետկի բոլոր ժողովրդի ներկայութեամբ, Դոժը նստացրեց դը-Շամպլիտին իւր կողքին գահի վերայ. պատրիարքը օրհնեց նորան և իւր ձեռքով մասնատրեց սուրբ հաղորդութիւնը. և ամենքի հայեացքը ուղղուած էր յատկապէս Ռոբէրի վերայ։ Բոլոր հանդէսների ժամանակ Ռոբէրը միշտ նստած էր լինում Դոժի հետ միասին, որ և ծանօթացնում էր նորան ամենքի հետ ոչ իբրև իսկական իշխան, որովհետև նա դեռ ևս մուտք չէր գործել իւր իշխանութեան մէջ, այլ իբրև Պելոպոնէսի ազնիւ նուաճողի քաջ եղբօրորդի։

Ճաշը բոլորովին համապատասխան էր Դոժի խոստմունքին, մինչև անգամ աւելի գերազանց էր։ Ճաշից յետոյ սկսուեցաւ պարահանդէսը, որ և տևեց ամբողջ գիշերը. այդ պարահանդէսի յափշտակող տպաւորութիւնը նոյնչափ վտանգաւոր էր Ռոբէրի սրտի համար, որչափ և պատիւները նորա գլխի համար։ Նորա կեանքի մէջ այդ առաջին անգամն էր, որ այնքան հրաշալի սևորակ աչեր նայում էին նորա վերայ և արձակում էին հարաւային արևի շողերը։ Մեր ասպետը բոլորովին թուլացած ընկաւ իւր անկողնի վերայ, երբ արդէն բոլորովին լուսացել էր։ Նա քնեց միայն մի քանի ժամ և տեսնում էր երազում պարեր, գեղեցիկ կանայք, հրաշալի աչեր և անգին գոհարներ։

Երբ Ռոբէրը զարթեց, Դոժը ուղարկեց նորան իւր նաւը և նոքա երկուսը երեկուան պարահանդէսի ամենաշքեղ տիկնանց հետ զբօսնելով անցան ծովային թագուհու գլխաւոր ջրանցքները։

Հետևեալ օրը պատրաստուած էին դարձեալ նոր հանդէսներ և ուրախութիւններ։

Բայց մի անգամ Ռոբէրին յաջողեցաւ խոյս տալ և գնաց առաւօտը Նոնի և Մատիօ դը-Մոնսի հետ նաւահանգիստը, ուր կանգնած էին սովորաբար նաւերը։ Բայց նոցա ջանքը վարձել մի որևիցէ նաւ՝ անցաւ իզուր. նաւահանգստում չկար ոչ մի նաւ, որ պատրաստուում լինէր ճանապարհորդութեան համար։ Նաւահանգստի վերակացուն յայտնեց, որ տօների պատճառով երբէք ոչ մի նաւ չէ դուրս գնում Վենետիկից մինչև նոր տարին և անկարելի է գտնել մի նաւապետ, որ համաձայնուէր ճանապարհ ելնել, որովհետև ամենքը սովորաբար անց են կացնում տօները, իւրեանց ընտանիքի մէջ։

Այդ լուրը տրտմեցրեց մեր ճանապարհորդներին։ Ամենից առաջ մխիթարուեցաւ Մատիօ դը-Մոնսը. նա նկատեց, որ այնուամենայնիւ կայ դեռ ևս երեք ամիս ժամանակ, իսկ յաջողակ քամիով ութ օրում կարելի է հասնել Պելոպոնէս։ Նոր տարուց յետոյ հեշտ կլինի գտնել մի նաւ, իսկ մինչև այն ժամանակ, փառք Աստուծոյ, չեն մեռնի քաղցածութիւնից և ծարաւից, և չեն մնայ ձիւնի մէջ Ալպեան սարերում։

Ակամայ կամօք պէտք է մնային ճանապարհորդները մինչև 1210 թուականի նոր տարին և հանդիսատես լինէին Վենետիկեան տօներին և հանդէսներին։ Իսկ երբ հասաւ նոր տարին, նոքա տարակուսած էին և չգիտէին ի՞նչ բանին աւելի զարմանան — այդ տօնի ուրախութեան և ոգեւորութեան, թէ շքեղութեան և փառաւորութեան։

Վերջապէս նոքա վճռեցին գտնել անպատճառ մի նաւ յունուարի 2-ին։ Բայց այդ օրը դեռ արշալոյսը չբացուած, եկաւ Դոժի հրաւիրակը և տարաւ Ռոբէրին իւր բոլոր պալատականներով Ռիալտօ կոչուած կամուրջի մօտ, որտեղից նոքա պիտի նայէին հազարաւոր նաւակների սրընթացութեան մրցութեան հանդիսին։ Այդ հանդէսը պատրաստուած էր ի պատիւ բարձր հիւրի։

Հանդէսը արդարև հիանալի էր։ Թիավարների ճարպիկութիւնը և նաւակների սրընթացութիւնը և թեթևութիւնը ընդհանուր զարմանք էին շարժում. նաւակները

այնպէս էին վազում, որ կարելի էր ծովային թռչուն համարել նոցա։ Հանդիսատեսները ծափահարում էին ուրախութեան գոչումներով. մանաւանդ անսահման էր դը-Մենսի ոգևորութիւնը, որը անցաւ մինչև անգամ պաղսիրտ Նոնին։ Հանդէսը շարունակուեցաւ մինչև երեկոյ, իսկ յետոյ Դոժը ճաշի հրաւիրեց իւր մօտ բոլոր երևելի հանդիսականներին։

Հետևեալ օրը պէտք է կատարուէր մրցանակաբաշխութիւնը երեկուան յաղթողներին։ Դոժը յանձնեց Ռոբէրին նախագահել իւր տեղը այդ հանդիսի մէջ և բաժանել մրցանակները։ Այդ օրը ամենաքաղցր օրերից մէկն էր երիտասարդ սոպետի համար քանի որ Վենետկումն էր։

Միւս օրը նշանակած էր զօրահանդէս և պաշտօնական հրաւէրք ճաշին սպարապետի մօտ։ Բայց այդ արգելք չեղաւ Ռոբէրին և նորա երկու խորհրդականներին գործ դնել մի երկու ժամ նաւ պտռելու համար. սակայն դարձեալ յաջողութիւն չունեցան։

Նոքա շարունակում էին ամեն օր, հանդէսներից և պատիւներից մնացած ազատ ժամերում, գնալ նաւահանգիստը, բայց միշտ ի զուր։ Միայն մի մարդ տեսան, որին Նոնը տեսել էր արդէն Դոժի պալատականների մէջ, և որ այժմ երևում էր իբրև նաւապետ։ Այդ նաւապետը յայտնեց, որ մի շաբաթից յետոյ կամ թէ շատ ուշ՝ տասը օրից յետոյ նա սպասում է մի նաւի գալուն։ Ինչպէս հաւատացնում էր նա, այդ նաւը բոլորովին բաւական էր Ռոբէրին և նորա պալատականներին տանելու համար։

Բայց մեր ճանապարհորդները չբաւականացան այդ յուսով։ Բացի ջրօրհնէքի օրից, երբ ամբողջ օրը նուիրուած էր ջուրը օրհնելու հանդիսին և նորանից յետոյ եղած սովորական ուրախութիւններին, Ռոբէրը և իւր խորհրդականները ամբողջ շաբաթ գնում էին ամեն օր նաւահանգիստը նաւ գտնելու, սակայն միշտ անյաջող։ Չկար ոչ մի նաւ, չկար մինչև անգամ ապրանքի նաւ, որ պատրաստվում լինէր ճանապարհ ընկնելու։ Հարկադրուեցան դիմել դարձեալ նաւապետին, որ սպասում էր իւր նաւի գալուն։ Հազիւ հազ կարողացան գտնել նորան, բայց իմացան որ նաւը դեռ չէ եկել, այլ սպասում են։

Բանը ծանրանում էր։ Արդէն յունուարի 15 էր, բայց բոլոր յոյսը մնացել էր մի նաւի վերայ, որ ով գիտէ որտեղ էր թափառում։ Կազմեցին խորհուրդ։

—Ա՛խ, եթէ այն ժամանակ լսէիք իմ խօսքին, գոչեց Մատիօ դը-Մօնսը, եթէ մենք սկզբից գնայինք ծովով, արդէն վաղուց Մօրէում կլինէինք։

Ռօբէրը տարուբերուում էր երկու ցանկութեան մէջ— ներկայ լինել մեծ պարահանդիսին, որ պատրաստում էր Վենետկի ամենագեղեցիկ տիկնանցից մէկը իւր անուանակոչութեան տօնախմբութեան առիթով, տասը օրից յետոյ և ճանապարհ ելնել որքան կարելի է շուտով։

Վերջապէս՝ նօնը առաջարկեց խնդրել Դօժից հասարակապետութեան նաւերից մէկը։ Ռօբէրը երկմտում էր, բայց ի վերջոյ առաջարկութիւնը ընդունուեցաւ ընդհանուր համաձայնութեամբ։

Այդ վճռից յետոյ, հետևեալ օրը երիտասարդ դը-Շամպլիտը մարդ ուղարկեց հարցնել Դօժի առողջութիւնը և յայտնել նորան, որ ինքը կամենում է տեսակցիլ նորա հետ։ Պատգամաւորը լուր բերեց թէ՝ Դօժը հիւանդ է։ Ռօբէրը իսկոյն ինքը գնաց պալատը և տեսաւ, որ բոլոր պալատականները վախեցած և տրտմած են։ Դօժը շատ հիւանդ էր և բժիշկը պատուիրել էր պահպանել կատարեալ հանգստութիւն։ Այդ դրութիւնը շարունակւում էր հինգ օր, և Ռօբէրը ամեն օր գնում էր իմանալ օգոստափառ ծերունու առողջութիւնը. պալատում ամենքը խօսում էին շատ կամաց ձայնով։

Այդ միջոցին սպասած նաւը չերևեցաւ. բայց եթէ նա կանգնած էլ լինէր նաւահանգստում, երիտասարդ իշխանին անվայել էր գնալ առանց Դօժի տեսութեան, մանաւանդ որ նա յայտնել էր նորան, որ հարկաւոր էր համարում խօսել և խորհրդակցել իւրեանց պետական յարաբերութիւնների և փոխադարձ շահերի մասին։

Վեցերորդ օրը, երբ Շամպլիտը գնաց պալատը, ասացին նորան, որ ծերունին փոքր ինչ լաւ է։ Ռօբէրը յայտնեց իւր ուրախութիւնը. այդ միջոցին զանգակի ձայն լսուեցաւ Դօժի սենեակից։ Պալատական սպասաւորը գնա-

լով ներս, շուտով վերադարձաւ և յայտնեց Ռոբէրին, որ Դոժը հրաւիրում է նորան մի րոպէով։

10

ԴՈԺԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Դոժը պառկած էր անկողնի մէջ։ Նորա աչքերի կարմրութիւնը կարծես թէ վկայում էին, որ նա ամենևին հիւանդ չէ եղել, բայց այդ երևի թէ ջերմից էր։ Դոժի ձայնը նոյնպէս աւելի հզօր էր, քան թէ պէտք է լինէր հիւանդութիւնից նուազած մի ծերունու ձայնը։

—Ձերդ բարձրութիւն, ասաց ծերունին, ես լսեցի ձեր ձայնը նախասենեակից և շտապեցի ներս հրաւիրել ձեզ։ Ես շատ զայրանում եմ հիւանդութեանս վերայ, որը զրկեց ինձ այնքան քաղցր օրերից, որ մենք կարող էինք անցկացնել միասին, մանաւանդ որ ինձ ասացին թէ՝ իբր ձեզ հարկաւոր է եղել տեսնել ինձ։ Այժերս դեռ նուազ են. բայց ես պատրաստ եմ ծառայել ձեզ, խնդրեմ յայտնեցէք ինչ որ ցանկանում էք։

Ռոբէրը յայտնեց իւր խորին շնորհակալութիւնը Դոժին, որ հաճեցաւ ցոյց տալ նորան այնպիսի մեծ պատիւ, ընդունելով իւր հիւանդ ժամանակ, մինչդեռ ուրիշին ոչ ոքին չէր ընդունում։ Նա յայտնեց նոյնպէս իւր խնդակցութիւնը Դոժին առողջանալու համար։ Վերջապէս՝ Ռոբէրը խոստովանուեցաւ Դոժին, թէպէտ ոչ առանց դժուարութեան, որ չէ կարողանում մի նաւ գտնել Մորէ հասնելու համար, ուստի վստահանում է խնդրել նորանից, եթի կարելի է, տալ հասարակապետութեան նաւերից մէկը։

—Դուք մի այդպիսի ցանկութի՛ւն ունիք, ի՛մ սիրելի իշխան, և դուք չէի՞ք վստահանում յայտնել ինձ այդ։ Հասարակապետութեան բոլոր նաւերը պատրաստ են ձեզ համար։ Ցոյս ունիմ, որ վաղը կամ միւս օրը թոյլ կտայ ինձ բժիշկը դուրս գալ սենեակից. ես կերթամ ձեզ հետ մեր նաւահանգիստը, և դուք կարող էք ընտրել ձեր հաւանած նաւը։

Ռոբէրը ի զուր էր աշխատում չափաւորել Դոժի այդպիսի եռանդագին պատրաստականութիւնը, հաւատացնելով

որ շնորհակալութեամբ կընդունէ մի որ և իցէ նաւ։ Բայց Դոժը պնդում էր իւր խօսքը, և ասպետը դուրս եկաւ ծերունու սենեակից խորին շնորհակալութիւններ յայտնելով։ Շամպլիտը շտապեց տուն յայտնել իւր ընկերներին ուրախալի լուրը և պատուիրել նոցա, որ պատրաստ լինին։

Բայց բժիշկը պատուիրեց Հիւանդ Դոժին երեք օր չդուրս գալ սենեակից։ Չորրորդ օրը Դոժը յայտնեց իւր բժշկին, Ռօբէրի ներկայութեամբ, որ թոթափում է իւր վզից նորա բժշկական լուծը, և կենդանի թէ մեռած միւս օրը նորին բարձրութեան հետ կերթայ անպատճառ նաւահանգիստը։

Եւ յիրաւի միւս օրը, կէսօրին, Ռօբէրը գնաց Դոժի հետ նաւահանգիստը, որը այդ առիթով զարդարուած էր իբրև մի մեծ տօնի առիթով։ Երևելի ուղեցոյցը ցոյց տուեց իւր հիւրին նաւակազմութեան գործարանի հոյակապ շինութեան բոլոր մասները մանրամասն բացատրութիւններով, աւելացնելով թէ՝ այդ բոլորը պատրաստ է նորան ծառայութիւն մատուցանելու։ Բայց որովհետև Ռօբէրտին այդ բոլորը ամենևին հարկաւոր չէր, ուստի նա անհամբեր շտապում էր տեսնել նաւերը։

Հազիւ թէ յայտնեց նա մուրթը կերպով իւր այդ ցանկութիւնը, Դոժը իսկոյն տարաւ նորան ամենալաւ նաւերից մէկի մօտ։ Նորա ծայրի վերայ փայլում էր Վենետկի ոսկեձոյլ թեւարձակ առիւծը. տախտակամածը զարդարած էր քանդակագործ արձաններով, իսկ պատերը մեծ մեծ հայելիներով։ Ռօբէրտը խեղդւում էր ուրախութիւնից, մտածելով իւր մէջ թէ՝ եթէ Դոժը կտայ նորան այդ նաւը, Պելոպոնէսի բնակիչները կհամարեն նորան ոչ իբրև լոկ իւրեանց իշխան, այլ իբրև թագաւոր թագաւորաց։

— Սա *ղուկենտաւրն* է, ասաց Դոժը,—սա պսակահանդիսի կառքն է, որ քառասուն տարի տանում էր իմ նախորդներին իւրեանց հարսի մօտ — Ադրիատիք ծովի մօտ։ Այս գոռոզ ծովային վիշապը դուրս է գալի իւր որջից միայն տարին մի անգամ, խորհրդաւոր միաւորութեան օրը։ Իսկ միւս բոլոր ժամանակ մինչև անգամ Դոժի ձայնը չէ կարող տեղից շարժել սորան։

—Ա՛խ, մտածեց Ռոբէրը, անցնենք դէպի միւսը. ըուկենտավրը մեզ համար չէ։

Դոժը դիմեց դէպի նաւահանգստի այն մասը, ուր պատրաստւում էին բազմաթիւ մեծ և մանր նաւեր։ Վենետկի նաւահանգիստը այն ժամանակ ներկայացնում էր Եւրոպայի նաւահանգիստներից ամենահարուստը։ Դոժը մանրամասն կերպով բացատրում էր Ռոբէրին ամեն մի նաւի զանազան արժանաւորութիւնները, ընթացքի արագութիւնը և այլն։ Վերջը Դոժը դարձաւ դէպի Ռոբէրը և ասաց ամենանուրբ քաղաքավարութեամբ.

—Ձերդ բարձրութիւնը կարող է ընտրել այս նաւերից իւր հաւանածը։

—Սոցանի՞ց, գոչեց Ռոբէրը։

—Այո՛, պատասխանեց Դոժը.—այժմ դուք գիտէք դոցանից ամեն մէկի արժանաւորութիւնը և կարող էք ընտրել կամ աւելի մեծը, կամ աւելի արագընթացը, ինչպէս որ կցանկանաք։

—Բայց այդ նաւերը դեռ ևս պատրաստ չեն։

—Այո՛, դեռ ևս պատրաստ չեն. բայց դոցանից երեքը կամ չորսը պատրաստ կլինին մի երկու ամսից յետոյ, իսկ մեծագոյն մասը երեք ամսից յետոյ։ Ցոյս ունիմ, որ մինչև այն ժամանակ դուք կմնաք մեզ մօտ հիւր. այս ցուրտ ձըմեռ ժամանակ հօ չէք կարող ենթարկել ձեր անձը դժընդակ Ադրիատիք ծովու կատաղութեան, ինչպէս իրաւացի կոչում էին նորան նախնիքը։ Բայց գուցէ ձեր անհամբերութիւնը առաջանում է նորանից, որ մենք չիմացանք հաճոյանալ ձեզ ձեր հիւրասիրութեամբ։

—Այն փառաւոր ընդունելութիւնը, որին արժանացայ ձերդ վսեմութեան կողմից, պատասխանեց Ռոբէրը—կարող էր կապել ինձ ընդ միշտ այս ափերին և ստիպել ինձ մոռանալ անգամ այն իշխանութիւնը, որի համար ես գնում եմ։ Բայց, տարաբախտաբար, իմ պարտաւորութիւնները համաձայն չեն իմ ցանկութիւններին։ Ինձ անհրաժեշտ հարկաւոր է գնալ, որչափ կարելի է շուտով, և աղաչում եմ ձերդ վսեմափայլութիւնից բարեհաճել տալ ինձ ձեր նաւատորմիղի պատրաստ նաւերից մէկը։

—Ես յոյս ունէի, ասաց Դոժը, որ դուք կընդունէիք

նոր նաւերից մէկը, որ կարող էր լիակատար բաւարարութիւն տալ ձեզ. նորան կպատրաստէին համեմատ այդպիսի բարձր ճանապարհորդի արժանապատուութեան։ Շատ ցաւում եմ, որ ձեզ հարկաւոր է շուտով ճանապարհ ընկնել, մանաւանդ ցաւալի է ինձ, որ մեր հասարակապետութեան նաւատորմիղը գտնւում է ներկայումս Իտրիայի ափերի մօտ, որտեղից չի վերադառնայ գարունքից առաջ։

Այդ խօսքերի ժամանակ Նօննը գունատուեցաւ ինչպէս մի մեռնող մարդ. Ռօբէրը կարմրեցաւ և դժուարութեամբ ծածկեց իւր դժգոհութիւնը։

—Ուրեմն ոչինչ հնարք չկա՞յ գնալու, հարցրեց Շամպլիտը. կարելի է, ինձ հարկաւոր է վերադառնալ Ֆրանսիա և այնտեղից գնալ։

—Ո՛հ, գոչեց Դօժը, որչափ ցաւում եմ, որ դուք առաջուց չասացիք ինձ ձեր անհրաժեշտութեան մասին գընալ անյապաղ։ Ես կարծում էի թէ դուք կմնաք մեզ մօտ ամբողջ ձմեռը։ Բայց եթէ ես իմանայի ձեր դիտաւորութիւնները, գուցէ հնարաւոր կլինէր օգնել մի կերպով ձեր գործին։ Սակայն տեսնեմ, դարձեալ՝ կփորձեմ.... ես հրամայել եմ կարկատել մի հին նաւ, որ մարտ ամսին ուղարկեմ Կրէտէ. կասեմ ծովապետին, որ նա շտապեցնէ, և այն ժամանակ, եթէ նաւը պիտանի կլինի, կարող էք ընդունել նորան։

Այդ յոյսը թէպէտ շատ փայլուն չէր, բայց այնուամենայնիւ միակ իրագործելի յոյսն էր ներկայ հանգամանքների մէջ, և մեր ճանապարհորդները ստիպուած էին ակամայ կամօք ընդունել նորան։ Նոքա տեսնում էին և պէտք է խոստովանել, որ Դօժը կատարում էր իւր կողմից ինչ որ կարող էր, նոցա օգնելու համար։

Բայց այդ կիսայոյսը արգելք չեղաւ Նօննին միւս օրը դարձեալ գնալ նաւահանգիստը տեղեկութիւններ ժողովելու առևտրական նաւի մասին, որին սպասում էին Եգէական ծովից։

Իսկ Մատիօ դը-Մօնսը կրկնում էր անդադար ողբալի ձայնով.

—Ա՛խ, երանի մենք գնացած լինէինք ծովով։

Հետևեալ օրը Դօժը կանչեց ծովապետին և հրա-

մայեց, Ռօբէրի և նորա ուղեկիցների ներկայութեամբ, շուտով անյապաղ, պատրաստել Առիւծը, որ նշանակուած էր Կրէտէ գնալու, որպէս զի ըստ առաջին հրամանի կարողանայ իսկոյն ճանապարհ ընկնել։ Ծովապետը գլուխ տուեց մինչև գետինը և խոստացաւ, որ Առիւծը պատրաստ կլինի շատ շուտով։

Նոյն երեկոյին պատրաստուած էր մեծ պարահանդէս, ուր Ռօբէրը յոյս ունէր չգնալ, թէպէտ ցանկանում էր բոլորովին հակառակը։ Այդ պարահանդէսը փոքր ինչ չափաւորեց նորա անհամբերութիւնը։

Միւս օրը պէտք էր հանգստանալ պարահանդիսից յետոյ, իսկ երեկոյեան սպասում էին նոցա նոր ուրախութիւններ։ Իհարկէ, ոչ ոք բան չէր յիշում նաւի մասին, — չէ՞ որ ժամանակ էր հարկաւոր նորա նորոգելու համար։

Երրորդ օրը գնացին նաւագործարանը իմանալու պատրաստ չէ՞ արդեօք նաւը։ Մօտեցան սպասաւորներից մէկին և հարցրին թէ ո՞րտեղ է կանգնած Առիւծը։ Նա ցոյց տուեց նոցա անկիւնը։

— Ի՛նչպէս, գոչեց Նօննը, — այդ արկղը, առանց կայմերի և առագաստների, առանց ղեկի և այլ պարագաների, դա՞ է ուրեմն Առիւծը։

— Դա իսկ է, պատասխանեց սպասաւորը. — նաւագործարանում չկայ ուրիշ նաւ այդ անունով։

— Եւ նորան չե՞ն պատրաստում ճանապարհորդելու համար։

— Դուք ինքեանքդ տեսնում էք, որ — ոչ։

Ռօբէրը կատաղեցաւ և պահանջեց իսկոյն նաւագործարանի տեսչին։ Երբ նա ներկայացաւ, Շամպլիտը հարցրեց թէ ինչո՞ւ չեն պատրաստում Առիւծը։

— Պատրաստել Առի՞ւծը. մի այդպիսի հրաման ես չեմ ստացել։

Սարսափելի կերպով զայրացած Ռօբէրը շտապեց իսկոյն Դոժի մօտ և շատ դառնացած գանգատուեցաւ նորան։ Դոժը սկսեց աղմուկ բարձրացնել, որ չեն կատարում նորա հրամանները, որ չունի հաւատարիմ մարդիկ, և իսկոյն կանչել տուեց ծովապետին։ Երբ ծովապետը ներկայացաւ, Դոժը զայրացած հարցրեց թէ՝ ինչո՞ւ չեն կատարուած իւր

հրամանները Առիւծի մասին։ Ծովապետը պատասխանեց թէ՝ նա ընդհակառակն իսկոյն շտապել է անել հարկաւոր տնօրէնութիւնները, թէ միևնոյն օրը հրամանը գրած էր, միւս օրը մաքուր արտագրած և արձանագրութեան մէջ մուծած և միայն մի քանի րոպէ առաջ ուղարկուած է։ Դօժը պատասխանեց, որ ինքը չէր երկբայում անգամ ծովապետի շուտափոյթ տնօրէնութեան մասին. վերստին խստիւ պատուիրեց նորան վերջացնել նաւի նորոգութիւնը որքան կարելի է շուտով. և ապա յայտնեց իւր ուրախութիւնը Ռօբէրին, որ նորա ցանկութիւնը շուտով կկատարուի։

Միւս օր, առաւօտը, Ռօբէրը դարձեալ գնաց նաւագործարանը։ Բայց որչափ մեծ եղաւ նորա զարմանքը, երբ մօտենալով Առիւծին տեսաւ նորան միևնոյն տեղում, միևնոյն դրութեան մէջ, միևնոյն վսեմափառ անշարժութեան մէջ, ինչպէս և երեկ։ Նորա զայրոյթը սահման չունէր և նա վազեց տեսչի գրասենեակը բացատրութիւն պահանջելու նորա այդպիսի անգործունէութեան մասին։ Բայց հազիւ թէ Ռօբէրը մտաւ սենեակը, տեսուչը ընդ առաջ վազեց նորան քաղցր ժպիտով, ուրախ դէմքով։ Նա յայտնեց ասպետին, որ ստացել է արդէն Դօժի հրամանը և շտապել է կատարել իսկոյն, թէ գլխաւոր վարպետին տալու հրահանգը արդէն գրած է, արտագրած և ստորագրած և իսկոյն պէտք է ուղարկէ նորան։ Եւ որովհետև հետևեալ օրը կիրակի էր, գործարանի տեսուչը յայտնեց Ռօբէրին, որ գործը կսկսուի երկուշաբթի առանց յետաձգութեան։

Եւ յիրաւի, երկուշաբթի, փետրուարի մէկին, Ռօբէրը առաւօտը կանուխ գնաց նաւագործարանը, հաւատացած լինելով, որ նորա հետ կխօսեն հրամանների, պատճէնների, հաղորդագրութիւնների մասին և կվերջացնեն սովորական խոստմունքներով գործել անյապաղ։

Բայց այս անգամ երիտասարդ դը-Շամպլիտը շատ զարմացաւ տեսնելով Առիւծի չորս կողմը զարմանալի գործունէութիւն. մի խումբ բանուորներ խռնուում էին նաւի շուրջը. կացինը և սղոցը արձակում էին այնպիսի ախորժելի ձայներ անհամբեր ճանապարհորդի ականջի համար։ Ռօբէրը նոյն ժամայն վճռեց, որ ամեն օր կերթայ հսկելու գործի վրայ և կլինի բախտաւոր վկայ նորա առաջադիմու-

թեան։ Մի օր կարկատում էին նաւի բոլոր վնասուած մասերը, միւս օր կանգնացնում էին կայմը, երրորդ օրը կապում էին պարանները, իսկ չորրորդ օրը ամրացնում էին ղեկը և թիերը, և այլն։

Վերջապէս, տասներորդ օրը երեկոյեան, Դոժը, ուրախութիւնը երեսին փայլած, յայտնեց Ռոբէրին, որ Առիւծը արդէն պատրաստ է և սպասում է միայն նորին բարձրութեան հրամանին։ Ընդնմին Դոժը խնդրեց հաճութիւն միւս օրը խորհրդակցել Մորէի ապագայ իշխանի հետ կարևոր գործերի մասին, որք վերաբերում են իւրեանց կալուածների փոխադարձ յարաբերութեանց և թէ ո՞րպիսի անձնական յարաբերութիւններ պէտք է կայանան Վենետկի Դոժի և Պելոպոնէսի իշխանի մէջ։

Հետևեալ օրը մինչև կէսօր, Դոժը զբաղուած էր իւր գործերով, իսկ Ռոբէրը — ճանապարհորդութեան պատրաստութիւններով։ Կէսօրից յետոյ Դոժը իշխանի հետ ընդարձակ խօսակցութիւն ունէր, որ շարունակւում էր մի քանի ժամ։ Յետոյ տրուեցաւ մի փառաւոր ճաշ Ռոբէրի գնալու առիթով, ուր մասնակից էր Վենետկի ամենաբարձր հասարակութիւնը։ Երեկոյեան Դոժը խնդրեց ծովապետից ներկայացնել իւրեան Առիւծի նաւապետը, որին ասաց Ռոբէրի ներկայութեամբ։

— Դուք պատիւ կունենաք տանել ձեր նաւով նորին բարձրութիւնը։ Դուք պէտք է լինիք նրա լիակատար հրամանի տակ։ Դուք պիտի գնաք որքան կարելի է արագ և հասցնել պայծառափայլ իշխանին Պելոպոնէսի այն նաւահանգիստը, որ նա ձեզ ցոյց կտայ։ Ձեր ճանապարհը դէպի Կրէտէ կղզին կարող էք շարունակել միայն այն ժամանակ, երբ նորին բարձրութիւնը թոյլ կտայ ձեզ։ Հասկացա՞ք ինձ։

— Բոլորովին, ձերդ վսեմափայլութիւն, պատասխանեց նաւապետը. — Ես ճշտութեամբ կկատարեմ այն հրամանները, որ բարեհաճեցաք տալ ինձ։

11

ԱՆՑԱՔՈՂՈՒԹԻՒՆ

Միւս օրը փետրուարի 12-ին Վենետկի ափունքները լցուել էին ժողովրդի ահագին բազմութեամբ։ Դոժի նաւակները փոխադրում էին Ռոբէրին և նորա ուղեկիցներին ցամաքից նաւի վրայ։ Ինքը Դոժը ճանապարհ դրեց մինչև նաւը Ֆրանսիայի ասպետին։ Ռոբէրը պատուիրել էր թեթև նախաճաշ պատրաստել նաւի վրայ իբրև շնորհակալութիւն ընդունելութեան փոխարէն։ Նախաճաշից յետոյ Վենետկի Դոժը և Պելոպոնէսի իշխանը բաժանուեցան միմեանցից ջերմ բարեկամութեան զգացմունքներով։ Դոժը նստաւ իւր նաւակի մէջ, իսկ Առիւծը հանեց իւր խարիսխը երաժշտութեան նուագածութեամբ։ Ամբողջ օրը նաւը լողում էր քաղաքային անթիւ ջրանցքների միջով և հազիւ միայն երեկոյեան դուրս գնաց ծովը և անարգել շարունակեց իւր ճանապարհը։ Սկզբում Առիւծը ընթանում էր այնպիսի արագութեամբ, որպիսին անսպասելի էր։

Նաւապետը սկզբում միայն մի անգամ ներկայացաւ Ռոբէրին և այնպիսի ցրտութեամբ էր վարւում իշխանի հետ, այնպիսի մեայլ կերպարանք էր կրում, որ եթէ այդ բոլորը չվերագրուէր հիւանդութեան, կարելի էր կարծել թէ նորան շատ անախորժելի էր գտանուիլ օտարական իշխանի հրամանի տակ։

Նաւապետը ամենևին չէր դուրս գալի տախտակամածի վրայ. մինչև անգամ ընթրիքին ներկայ չեղաւ։ Նորա փոխանակ նստած էր ընթրիքին նորա օգնականը, մի ժիր, ուրախ և զուարթ երիտասարդ, որ մեծ յարգանք էր ցոյց տալիս իւր բարձր ճանապարհորդին։

Միւս օրը, առաւօտեան, դարձեալ նկատելով նաւապետի բացակայութիւնը, Ռոբէրը հարցրեց նորա մասին մի տեսակ տհաճութեամբ։

—Խե՛ղճ, պատասխանեց նաւապետի օգնականը, նա այնպիսի դրութեան մէջ է, որ ես երկիւղ եմ կրում նորա կեանքի մասին։ Երեկ երեկոյեան նա հիւանդացաւ և այնուհետև ոչ աչք է բաց արել և ոչ մի բառ ասել։

Ռօբէրը խնայեց նաւապետին, բայց ընդ նմին մխիթարուեցաւ, որ նաւի կառավարութիւնը անցել էր օգնականի ձեռքը, որի բնաւորութիւնը աւելի հաճելի էր իշխանին։

Գիշերը օգնականը յայտնեց յանկարծ սաստիկ անհանգստութեան նշաններ։ Նաւապետի հիւանդութիւնը սաստկանում էր. հիւանդը ոչ միայն ոչինչ չէր խօսում, այլ և կարծես թէ չէր ղգում թէ ինչ էր պատահում նորա շուրջ կողմը. նորան առաջարկում էին ուտել մի բան կամ դեղ ընդունել, բայց նա ոչինչ չէր պատասխանում։

—Եթէ հիւանդութիւնը կշարունակուի, աւելացրեց օգնականը, մնում է մի միջոց – թողնել նորան Բուդուայում, ուր նա ազգականներ ունի, և ուր կհասնենք, որպէս յոյս ունիմ, վաղը։

Ռօբէրը բոլորովին համաձայնեցաւ այդ կարծիքի հետ։

—Միայն թէ դուրանից չդուրս գայ ճանապարհի որևիցէ յետաձգութիւն, նկատեց դը Մ'օնսը։

—Ո՛չ, մի ժամ անգամ չենք կորցնի, պատասխանեց օգնականը, մենք կարող ենք կանգնել նաւահանգստում առանց խարիսխը ձգելու։

Հասան Բուդուա նաւահանգստին։ Օգնականը յայտնեց, որ նաւապետի առողջութիւնը աւելի վատացել է։ Նաւաստիները իջեցրին նաւակը և տարան նաւապետին առանց ուշքի, բոլորովին փաթաթած վերմակներով և վերարկուներով, իւր ազգականների մօտ։

Մի ժամից յետոյ Առիւծը շարունակեց իւր ճանապարհը. Վենետիկից դուրս գալուց ութ օր յետոյ ճանապարհորդները տեսան Ժանօ կղզին Կորֆուի արևմտեան կողմը։ Երկինքը պայծառ էր, Ռօբէրը նստած նաւի տախտակամածի վրայ, Մատիօ դը-Մօնսի և Նօնսի հետ, նայում էր զուարճութեամբ հեռաւոր լեռների վրայ, որոնք կարծես վազում էին դէպի հարաւ ինչպէս միգամած ամպեր։ Ռօբէրին ասացին թէ՝ այդ լեռները պատկանում են Պելոպոնէսին։

—Առիւծը վազում է շատ լաւ, ասաց Ռօբէրը նաւապետի օգնականին։

—Ա՛խ, ձերդ բարձրութիւն, ես առաւել շատ սիրում եմ հին գինին, քան թէ հին նաւերը։ Ինչո՞ւ ի զուր վատնեցին

այնքան աշխատութիւն և ծախք այս նաւի նորոգելու համար։ Երեկուանից ջուրը սաստիկ վազում է նաւի ներքնայարկի մէջ, եթէ մենք շատ մօտ չլինէինք Կորֆու կղզուց, ես կանհանգստանայի։

—Ի՛նչպէս, վտանգ կա՞յ. մի՞թէ կարծում էք այդ, պ. օգնական։

—Առիւծը կարող է դիմանալ ծովի վրայ ոչ աւելի քան թէ մէկ օր ու գիշեր, իսկ մինչև Կրէտէ մեզ մնում է գոնէ տասնևհինգ աւուր ճանապարհ։

—Իսկ Կլարենցիայից հեռո՞ւ ենք արդեօք։

—Բայց Կլարենցան, կարծեմ, Պելոպոնէսո՞ւմն է։

—Ի հարկէ։ Ուրիշը չկայ ոչ մի տեղում։

—Ո՛հ, ուրեմն գոնէ վեց օր, եթէ կունենանք յաջողակ և ուղեկից քամի։

—Վե՛ց օր։ Ես ցանկանում եմ դուրս գնալ Կլարենցայից։

—Կլարենցիայ՛ում, գոչեց նաւապետի օգնականը։ Ձերդ բարձրութիւնը կամենում է անցնել ցամաքը Պելոպոնէսո՞ւմ և ոչ թէ Կրէտէո՞ւմ։

—Անկասկած, պատասխանեց Ռօբէրը ծիծաղելով։ Վսեմափայլ Դօժը յանձնեց Առիւծը իմ տնօրէնութեան, որ ինձ տանէ Պելոպոնէս, և ոչ թէ Կրէտէ։ Ո՞րքան ժամանակ կհարկաւորի նաւը կարկատելու համար։

--Օր... երկու... երեք..., պատասխանեց օգնականը, մտածելով։ Այժմ չեմ կարող ճիշտն ասել։ Կտեսնենք թէ ի՞նչպէս են բանում վարպետները Կորֆուում։

—Տնօրինեցէք, որ նոքա աշխատեն որքան կարելի է արագութեամբ և ջանացէք հասցնել մեզ Կլարենցա որքան կարելի է շուտով։

Նաւապետի օգնականը գլուխ տուեց և գնաց անելու հարկաւոր կարգադրութիւններն, որնաւը կարկատեն Կորֆուում։

Կորֆու մտան արեգակը մայր մտնելուց երկու ժամ առաջ։ Բայց որովհետև նաւը կարկատելու համար հարկաւոր էր դատարկել նորան, ուստի բոլոր ճանապարհորդները անցան ցամաքը։ Ռօբէրը իւր ուղեկիցներով գնաց հիւրանոց, որ հեռու չէր նաւահանգստից և որտեղից նա կարող էր վերադիտել նաւի նորոգութեան վերայ։ Իսկ դը-

Մոնսը գնաց, Ռոբէրտի յանձնարարութեամբ, փոխարքայի մօտ Դոժի նամակներով։

Փոխարքան շտապեց այցելութիւն անել նշանաւոր ճանապարհորդին, հրաւիրեց նորան իւր մօտ ընթրիքին, որ թէպէտ այնքան փառաւոր չէր, ինչպէս Վենետկի ընթրիքները, բայց և այնպէս բաւական կենդանի և ուրախ։ Ընթրիքի վերջում Ռոբէրը սկսեց աղաչել փոխարքային օգնել նորան փութով վերջացնել նաւի կարկատանը. և փոխարքան հաւատացրեց նորան, որ ամբողջ կղզու բոլոր վարպետներին կյանձնէ նաւապետի տնօրէնութեան։ Ճանապարհից նեղացած և կուշտ ընթրիքով ծանրաբեռնուած, Ռոբէրը քնեց անուշ քնով. հրաշալի երազները բորբոքում էին նորա երևակայութիւնը, որ գրգռել էր Կիպրոսի գինին։

Յանկարծ լսուեցաւ մի սարսափելի ճիչ, և Ռոբէրը զարթեց։ Չկարողանալով դեռ ևս հաշիւ տալ իւրեան քնած է թէ արթուն, նա սկսեց ուշադրութեամբ լսել, և ահա դարձեալ լսուեցաւ միևնոյն ձայնը նաւահանգստի կողմից։ Ռոբէրը իսկոյն զարթեցրեց դը Մոնսին և Նոննին, որք քնած էին միւս սենեակում, և հարցրեց թէ՝ նոքա էլ լսել են արդեօք շջոցի քամ սաստիկ սուլելու ձայնը։

Դը-Մոնսը լսել էր։

—Ի՞նչ է նշանակում այդ, հարցրեց Ռոբէրը. նաւը ուրեմն գնո՞ւմ է և մենք պէտք է պատրաստո՞ւինք։

—Անկարելի բան է, պատասխանեց դը-Մոնսը։ Միթէ կարելի՞ էրայդպէս շուտով նորոգել նաւը։ Բացի սորանից եթէ նաւը յիրաւի պատրաստ լինէր գնալու, նաւապետը անշուշտ կշտապէր տեղեկութիւն տալ ձերդ բարձրութեան։

Եւ այդ խօսքերն ասելով՝ դը-Մոնսը մօտեցաւ պատուհանին։

—Գիշերը սաստիկ մութն է, ոչինչ չէ երևում ամենևին. ծովը սև է ինչպէս թանաք. Առիւծը ամենևին չէ նշմարւում։ Եթէ սուլեցին նորա վրայ, այդ կնշանակէ, որ գործունեայ նաւապետը պատրաստւում է աշխատելու։ Կարծեմ, կարող ենք հանգիստ քնել մինչև որ մեզ տեղեկութիւն կտան։

Նոննը թւում էր թէ նոյն կարծիքի էր, որովհետև անշարժ պառկած էր իւր մահճակալի վերայ։

Ռոբէրը տեսաւ, որ նորա անհանգստութիւնը անտեղի էր, նա պառկեցաւ և դարձեալ քուն մտաւ։

Մի քանի ժամանակից յետոյ Ռոբէրը բացեց աչքերը։ Աքաղաղները կանչում էին, արշալոյսը նոր էր սկսում ոսկեզօծել արևելքը։ Իշխանը վեր թռաւ տեղից և վազելով պատուհանի մօտ նայեց նաւահանգստի կողմը։ Այդտեղ նա կարծեց թէ՝ քունը դեռ ևս մթնացնում է նորա աչքերը կամ թէ դեռ ևս չէր անցել Կիպրոսի գինու ազդեցութիւնը։ Ռոբէրն սկսեց շփել աչքերը երկու ձեռքով և դարձեալ սկսեց ուշադրութեամբ նայել ծովի վերայ։

—Նոնն, Մատիօ, աղաղակում էր Ռոբէրը, և մատով ցոյց տուեց նոցա նախ նաւահանգստի վերայ, ուր չկար այլ ևս Առիւծը, իսկ յետոյ հորիզոնի վերայ, ուր երևում էր մի նաւ, որ վազում էր արագութեամբ բոլոր առագաստները բացած, դէպի հարաւ։

Այդ րոպէին ներս մտաւ հիւրանոցի ծառան և մի նամակ մատոյց Ռոբէրին։

—Այս նամակը գիշերով բերեց մի նաւաստի, ասաց ծառան. նա հարցրեց թէ քնա՞ծ է արդեօք իշխանը և ասաց թէ չէ հարկաւոր զարթեցնել, այլ յանձնել նամակը ձերդ բարձրութեան երբ կբարեհաճիք զարթնել։

Նամակի մէջ գրած էր հետևեալը.

«Ձերդ բարձրութի՞ւն։

«Այսօր դուք ցանկութիւն յայտնեցիք մտնել Պելոպոնէս. ես կարդացի նաւապետին տուած հրահանգները և տեսայ, որ նորան պատուիրած էր գնալ ուղղակի Կրէտէ։ Ես ոչինչ բանաւոր հրաման չեմ ստացել, իսկ հասարակապետութեան օրէնքները խիստ են։ Ես ունիմ կին և երեք զաւակ։ Ամենափոքր շեղմունքի համար հրահանգից, ես կարող եմ դատապարտուած լինել հառաչանաց կամուրջը անցնելու (մահու վճիռ)։ Վասն որոյ ամենախոնարհաբար խնդրում եմ ձերդ բարձրութիւնից ուրիշ նաւով գնալ Պելոպոնէս. իսկ ես ըստ ինձ տուած հրամանի զօրութեան կերթամ Կրէտէ։

Անձնուէր ձեզ

Օգնական նաւապետի Մ. Մ.»

Նամակը կարդալուց յետոյ Նոնը ուժգնութեամբ զար-

կեց ձեռքը ճակատին և պոկեց գլխից մի բուռը մազ։ Դը-Մոնսը կանգնած էր բերանը բաց, անշարժ, իբրև արձան։ Տեսարանը հետաքրքրելի էր։ Բոլոր երեքը կարծես թէ ցնորուել էին։ Նոքա նայում էին մին ծովի վերայ, մին միմեանց վերայ, և դարձեալ ծովի վերայ։ Ոչ մի միտք չէր ծնւում նոցա շփոթուած գլուխներում։

Վերջապէս, դը-Մոնսը սկսեց առաջինը.

—Գնանք փոխարքայի մօտ։

—Գնանք նաւահանգիստը, միևնոյն բոպէին գոչեց Նոնը։ Վարձենք ուրիշ նաւ։

—Եւ այնտեղ և այստեղ, ասաց Ռոբէրը։ Դուք վազեցէք նաւահանգիստը, գտէք ուրիշ նաւ, իսկ ես կերթամ փոխարքայի մօտ։

Այդ կարծիքը ընդունուեցաւ։ Աշխատութեան այդպիսի բաժանմունքը ժամանակ էր վաստակում։

Այդպէսով՝ Նոնը և դը-Մոնսը գնացին նաւահանգիստը, իսկ Ռոբէրը փոխարքայի մօտ։ Բայց հակառակի պէս փոխարքան տանը չէր և փոխարքայական վարչութեան քարտուղարը, որին Ռոբէրը պատմեց իւր անտանելի դրութեան մասին, խոստացաւ իսկոյն մարդ ուղարկել փոխարքային կանչելու համար։ Փոխարքայի տանից Ռոբէրը գնաց ուղղակի նաւահանգիստը, բայց նա այնտեղ չգտաւ ոչ դը-Մոնսին և ոչ Նոնին, որպէս և չտեսաւ ոչ մի նաւ, որ կարողանար տանել նորան Պելոպոնէս։ Նա ստիպուած էր վերադառնալ տուն և սպասել թէ ի՞նչ կլինի։

Կէս ժամից յետոյ, որ Ռոբէրին թուեցաւ իբրև կէս դար, Նոնը ներս վազեց յաղթական դէմքով.

—Գտանք, գտանք, գոչում էր նա։

Յետոյ սեղանի վերայ նետելով քսան Վենետկեան ոսկի, շարունակեց.

—Մենք գնում ենք վաղը։ Մենք կունենանք նաւ, աւելի լաւը Վենետկի Դոժի բոլոր նաւերից։

—Ո՞րտեղ էք գտել մի այդպիսի հրաշալիք, հարցրեց Ռոբէրը։ Ես շրջեցի բոլոր նաւահանգիստը, բայց չտեսայ ոչ մի նաւակ։

—Մենք նոյնպէս վազեցինք բոլոր նաւահանգիստը, պատասխանեց Նոնը, և ես սկսեցի արդէն կարծել, որ մեզ

հարկաւոր կլինէր լողալով գնալ Պելոպոնէս։ Մտածմունքի մէջ բարձրանում էինք ծովի մօտ եղած բլրակի վերայ, և ահա յանկարծ տեսանք նաւի կայմեր։ Վազեցինք դէպի այնտեղ և փոքրիկ ծովածոցում գտանք խարիսխ ձգած մի նաւ, որ բաւական էր մեր բոլոր ուղեկիցներին և ձիաներին։

—Եւ նա համաձա՞յն է տանել մեզ։

— Ի հարկէ համաձայն է։ Մենք իսկոյն վարձեցինք նորան և ես քսան ոսկի գրաւական վերցրի նորանից։ Յամենայն դէպս՝ ես լաւ համարեցի թագցնել ձերդ բարձրութեան անունը և տոհմանունը, որովհետև... ո՞վ գիտէ։

—Ի՞նչպէս, դուք կասկածո՞ւմ էք...։

—Զգիտեմ, պատասխանեց Նօնը. բայց մեզ հանդիպած արգելքներից մի քանիսը շատ պարզ չեն թւում ինձ։ Յամենայն դէպս ոչ ոքի համար ոչինչ օգուտ չի ունենայ խափանարիթ արգելքներ դնել պարոն Արնոլֆին, Հունգարիայի վաճառականին, գնալ Մորէ ձիեր ծախելու համար։ Ես այդպէս ասացի ձեր անունը նաւապետին.

Կարծեմ, լաւ էք արել. բայց ո՞ւր է դը-Մօնսը։

—Դը-Մօնսը մնաց նաւի վերայ հսկելու, որ նա էլ այնպէս չբաց անէ իւր թևերը, ինչպէս Առիւծը։ Նաւապետը խոստացաւ, որ ամեն բան պատրաստ կլինի մինչև երեկոյ։ Ուրեմն երեկոյեան ձիերը կտեղաւորենք նաւի վերայ, իսկ վաղը դեռ լոյսը չբացուած ճանապարհ կընկնենք։

—Ուրեմն պատրաստուենք, գոչեց Ռօբէրը, թռչկոտալով ուրախութիւնից, և ժամանակ չկորցնենք. իսկ մենք երեկոյեանից ստնենք նաւը։

Եւ երկուսն էլ զարմանալի եռանդով սկսեցին դարսուիլ և պատրաստուիլ ճանապարհի համար. և միայն բոլոր բանը վերջացնելուց յետոյ գնացին փոքր ինչ կլօսնելու քաղաքի մէջ։ Արևը մայր մտնելուց երկու ժամ առաջ նոքա արդէն մտածում էին փոխադրել նաւի վերայ ձիերը և միւս բաները և ահա յանկարծ ներս մտաւ փոխարքան։

—Ձերդ բարձրութիւն, ասաց փոխարքան, շատ ցաւում, որ այսօր առաւօտը տանը չէի, ես ստիպուած էի բացակայել պաշտօնական անհրաժեշտ գործերիս պատճառով։ Այնուամենայնիւ ես գործ դրի բոլոր միջոցները, ինչ

որ կարող էի, հեռացնելու համար ձեզանից այն անբաւականութիւնը, որ պատճառեց ձեզ ձեր նաւի գնալը։ Որ բոպէին ինձ յայտնեցին թէ՝ ձեր նաւապետը ձգել է ձեզ այստեղ, ես իսկոյն հրամայեցի սպասաւորներիցս մէկին ընտել շուտով առաջին պատահած նաւը, չխնայելով ոչինչ ծախք, պնդել փախստականի ետևից և չվերադառնալ մինչև որ չհասնէ նորան և չյանձնէ նաւապետին իմ հրամանները, և առանց այլևայլութեան վերադարձնել Առիւծը։

—Շատ շնորհակալ եմ ձեզանից, տէր փոխարքայ, պատասխանեց Գօբէրը։ Բայց...

—Մեծ ուրախութեամբ յայտնում եմ ձեզ, շարունակեց փոխարքան, որ իմ ճարպիկ սպասաւորը հասել է նպատակին։ Նա արդէն տեղեկութիւն հասցրեց ինձ, որ գնալու համար գտել է այստեղ մի նաւ, որի նաւապետը առաջ չէ կամեցել գնալ, պատճառելով թէ նաւը արդէն վարձել է ուրիշը և ինքը տուել է քսան ոսկի ապահովագին, բայց ծառաս տուել է նորան քառասուն ոսկի և ստիպել է ճանապարհ ընկնել։ Նաւը վարձող վաճառականի ծառաներից մէկն այնտեղ է եղել և կամեցել է ընդդիմանալ, բայց իմ ծառան սպառնացել է ծովը նետել նորան, և այդպիսի ազդու միջոցի շնորհիւ, ժամ առաջ իջնելով սարից, ուրախութեամբ տեսայ, որ նաւը դուրս գնաց նաւահանգստից։

—Նոննը երկու ձեռքով պինդ սղմեց իւր գլուխը և քարշեց մազերը։

—Բայց դուցէ ձերդ գերազանցութեան յայտնի է, հարցրեց նա դողդոջուն ձայնով, թէ ո՞վ է վարձել այն նաւը։

—Ով էլ որ լինի, պատասխանեց փոխարքան, յամենայն դէպս Նրան կհարկաւորի սպասել մի կամ երկու շաբաթ, որովհետև ուրիշ նաւեր չկան կղզու վերայ։ Ծառաս գրում է թէ՝ նաւը վարձել է մի Հունգարացի վաճառական, որը կարծեմ ձիերով է առուտուր անում։

Եթէ Նոննի մազերը չունենային շատ պինդ արմատներ, նոքա անշուշտ կմնային նորա մի ձեռքի մէջ, մինչդեռ միւսը բռունցք էր սեղմել և պատրաստւում էր կայծակի պէս զարնել փոխարքայի գլխին։ Բայց բարեբախտաբար Նոն-

նը ստիպուած էր մեկնել երկու ձեռքն էլ Ռօբէրին բռնելու համար, որը դեղնած մեռելի պէս, զգաց թէ սենեակը շրջում է նորա չորս կողմը և ինքը փոքր էր մնացել տապալուէր գետնի վրայ։

Բայց Ռօբէրը կարողացաւ պահել իւրեան և փոքր ինչ հանգստանալով՝ հարցրեց նուազ ձայնով։

—Ուրեմն այն նաւը գնա՞ց։

—Գնաց, ասաց փոխարքան յաղթական շեշտով։ Նայեցէք ինչպէս արագ լողում է նա դէպի հարաւ, վազելով Առիւծին հասնելու համար։ Նա (Առիւծը) այժմ երևւում է հորիզոնի վերայ ինչպէս մի սպիտակ կէտ, իսկ սա ինչպէս մի թևերը տարածած աղաւնի։ Միամիտ եղէք, նա չի վերադառնայ մինչև որ չհասնի ձեր նաւին։ Ձերդ բարձրութիւն, ես ցնծում եմ, որ կարողացայ մի ծառայութիւն մատուցանել ձեզ։

—Շնորհակալ եմ ձեզանից, տէր փոխարքայ, ասաց Ռօբէրը, ատամները կրճտացնելով։

Յետոյ, երբ փոխարքան գնաց,

—Ա՛խ, Նօ՛ն, Նօ՛ն, յիրաւի մենք կստիպուենք վերջապէս լող տալով գնալ Պելոպոնէս։

Նօնը պատասխանեց հառաչանքով և մի շարք յիշողներով բոլոր անցեալ, ներկայ և ապագայ փոխարքաների դէմ, մոռանալով որ վերջինների դասակարգին պատկանում էր և Մօրէի կարծեցեալ իշխանը։

12

ՍՊԱՍԵԼՈՎ ՅԱՋՈՐԴԻՆ

Նաւը Կորֆուից հինգ օր հետապնդում էր Առիւծին, բայց չկարողացաւ հասնել նորան։ Վեցերորդ օրը առաւօտեան, գուցէ հրաժարուելով անօգուտ հետապնդութիւնից, նաւը խարիսխ ձգեց Պօնտիկօի մօտ։ Այնտեղ նաւապետը ափը հանեց դը-Մօնսին առանց հարցնելու նորանից թէ՝ ցանկանո՞ւմ էր նա արդեօք այդ, թէ ոչ։

Տեղեկանալով, որ կուսակալը Անդրավիդումն էր, դը-Մօնսը գնաց այդ քաղաքը։

Այս անգամ նա այլ ևս չէր կրում ծպտեալ կերպարանք աբեղայական վերարկուով, ուստի երբ նա մտնում էր Վիլլարդուինի տունը, բոլոր այնտեղ եղած ասպետները իսկոյն ճանաչեցին, որ նա Մատիօ դը-Մօնսն էր, Վելիգոստի բարօն, և մեծ ուրախութեամբ ընդունեցին նորան։ Այդ ուրախութեան հետ խառն էր գուցէ և մի մասն հետաքրքրութեան, ըստ որում նոքա գիտէին, որ մի տարի առաջ Մատիօն գնաց կոմս դը-Շամպլիտի հետ և ամենքը կասկածում էին, որ նորա վերադարձը ունէր որպիսի և իցէ քաղաքական նշանակութիւն։

Վիլլարդուինը տարաւ դը-Մօնսին իւր սենեակը։ Խոսակցութիւնը նոցա մէջ շարունակւում էր մի քառորդ ժամի չափ։ Վիլլարդուինը դուրս եկաւ սենեակից և հրամայեց կանչել քաղաքապետին։

Յետոյ առանձնացնելով Պետրալիֆասին պատուհանի մօտ, Վիլլարդուինը ասաց նորան։

—Նշանաւոր լուր։ Նորին բարձրութիւն մեր իշխանը եկել է։

—Մեր իշխա՞նը, գոչեց զարմացած Պետրալիֆասը։

—Այո, Ռոբէր դը-Շամպլիտը, Վիլհելմ Շամպանեան իշխանի եղբօրորդին։

Պետրալիֆասը նայեց Վիլլարդուինին, բայց ոչինչ փոփոխութիւն չնկատեց նորա երեսի վերայ։

—Ահա Վենետկի Դոժի նամակը, շարունակեց Վիլլարդուինը։ Նա ինձ հաղորդում է, որ նորին բարձրութիւնը անցել է Վենետկով և ճանապարհ է ընկել այնտեղից հասարակապետութեան զինուորական նաւով։ Իսկ ահա սա յայտնեց, որ իշխանը հասել է արդէն Կորֆու։

—Կորֆո՞ւ։

—Այո, և սորան ուղարկել է առաջ ինձ տեղեկութիւն տալու համար իւր գալու մասին։

—Եւ դուք այժմ ի՞նչ էք մտածում անել, հարցրեց Պետրալիֆասը մոռանալով իւր սովորական զգուշութիւնը, այն աստիճան տանջում էր նորան հետաքրքրութիւնը։

Վիլլարդուինը ծիծաղեց։

—Օգնութիւն խնդրել ձեզանից, Տէր, պատասխանեց նա։

— Ես միշտ պատրաստ եմ ծառայել ձերդ պայծառափայլութեան, ասաց շփոթուած ծերունին. բայց միայն վախենում եմ, որ իմ ոյժերս...

— Ես դէպի չարը չեմ գործ դնի ձեր ոյժերը, ասաց Վիլլարդուինը ժպտալով: Իմ խնդիրս կլինի միայն այն, որ դուք շատ պարտաւորացներով ինձ մնաք Անդրավիդում, որպէս զի իմ կողմից ընդունէք նորին բարձրութիւնը, եթէ նա դուրս կգայ Սան-Զաքարիայում: Նորին սրբազնութիւն Օրլէնի եպիսկոպոսին ես կուղարկեմ սպասելու իշխանին Պոնտիկոյում, եթէ նա այնտեղ դուրս կգայ, իսկ ինքս կերթամ Բլիզիրի, որպէս զի հաւասար հեռաւորութեամբ լինիմ բոլոր նաւահանգիստներից: Կկատարէ՞ք իմ խնդիրս:

Պետրալիֆասը այնպէս քիչ էր սպասում մի այդպիսի առաջարկութեան, որ մի քանի ժամանակ կանգնած էր տարակուսած: Վերջապէս նա ասաց.

— Ես կցանկայի, ձերդ վսեմափայլութիւն, պիտանի լինել ձեզ աւելի ախորժելի դէպքում:

— Այս դէպքը ինձ համար ամենից աւելի ախորժելի է, ասաց Վիլլարդուինը, որովհետև քակում է իմ ստրկութեան շղթաները և միջոց է տալի ինձ առանց խանդարելու պարտաւորութիւններս վերադառնալ իմ սիրելի հայրենիքը, իմ ընտանիքի ծոցը:

— Ախորժելի դէպք ձերդ վսեմափայլութեան համար, պատասխանեց ծերունին, խորամանկութեամբ ժպտալով, բայց շատ վշտալի ձեր հպատակների և ձեր մտերիմների համար:

— Ուրեմն ես կարո՞ղ եմ յուսալ, որ դուք կփոխարինէք ինձ իշխանի առաջև, եթէ նա կգայ ուղիղ այստեղ:

— Միշտ պատրաստ եմ ծառայել ձերդ պայծառափայլութեան, պատասխանեց Պետրալիֆասը:

Ծերունին ենթադրում էր, որ իշխանը աւելի հաւանական է, որ դուրս կգայ Սան-Զաքարիայում իբրև աւելի մօտաւոր նաւահանգիստ, և ուրախ էր դիպուածին առաջինը ինքը ընդունել նորան, և որ գլխաւորն է մնալ նորա հետ առանձին:

— Միայն խնդրեմ, իսկոյն տեղեկութիւն տուէք ինձ, երբ որ նա կգայ, ասաց կուսակալը:

—Հանգիստ եղէք բոլորովին, վեմափայլ տեր.—և աւելացրեց իւր մտքում.

—Իսկ եթէ մի օր կամ երկու կուշացնեմ, մեծ վնաս չի լինի։

Այդ ժամանակ ներս մտաւ քաղաքապետը։ Վիլլարդուինը մօտ կանչեց նորան բարձր ձայնով, ի մեծ զարմանս բոլոր ներկայ եղողների, որոց հետաքրքրութիւնը սաստիկ շարժուած էր։

—Պարոն, ասաց Վիլլարդուինը, ինձ տեղեկութիւն տուին թէ շուտով գալու է մի ազնիւ օտարական, մեր տիրոջ և իշխան Վիլհելմ դը-Շամպլիտի եղբօրորդին։ Ես դը-նում եմ Բլիղիրի և կսպասեմ նորան այնտեղ։ Իսկ եթէ նա կգայ ուղղակի Անդրավիդ, դուք ցոյց կտաք նորան բոլոր արժանավայել պատիւները և կկատարէք վսեմափայլ Պետրալիֆասի հրամանները։

Այնուհետև Պետրալիֆասը հեռացաւ, իսկ Վիլլարդուինը ճանապարհ ձգելով նորան մինչև դուռը և ողջոյն տալով դահլիճում եղած բոլոր ասպետներին, մտաւ իւր ներսի սենեակները, ուր իսկոյն հրամայեց կանչել քաղաքապետին։

Բոլոր ասպետները և բարոնները, որք լի էին դահլիճում, շրջապատեցին դը-Մօնսին, ցանկալով իմանալ նորանից թէ՝ ի՞նչ մարդ է արդեօք այդ եղբօրորդին և ի՞նչ նպատակով է գալիս։ Բայց դը-Մօնսը մեծ քաղաքագէտ էր. նա յայտնում էր իւր կարծիքը և՛ դրական և՛ բացասական կերպով, և՛ հաստատում էր և՛ մերժում էր, խօսում էր խիստ շատ, բայց չասաց և ոչինչ։ Սակայն մի քանի խօսքերը, իբր ակամայ թռած նորա բերանից, թէ՝ կոմս դը-Շամպլիտին ցանկալի է իր տոհմի ձեռքում պահել Պելրոպոնէսը, և մի քանի այդպիսի ակնարկութիւնները—մի քանի տեսակ կասկածներ յարուցին։ Այնուհետև ամենքը ցանկանում էին իմանալ թէ ի՞նչ բնաւորութիւն ունի Ռօբէրը։

—Կատարեալ ասպետ է, ասաց դը-Մօնսը. նա ունի միայն մի առաջնորդ—փառք։ Այդ ազնիւ կիրքը տանջում է նորան այն աստիճան, որ ուրիշի փառքը անարգանք է համարում իւր համար. ամեն մէկ մարդ, որ փառք է վաստակում իւր քաջութիւններով, նորան թւում է իբրև թշնամի։

նամի, իբրև յափշտակող նորա սեպհականութեան։ Բայց միևնոյն ժամանակ Ռօբէրը կարող է լինել հաւատարիմ և անձնուէր ընկեր. նորա ընկերները և մտերիմները Շամպանիայում գրեթէ պաշտում են նորան, և նա խոստացաւ նոցա, որ եթէ երբևիցէ ձեռք կձգէ թագաւորական իշխանութիւն իւր սրի բերանով կամ ժառանգութեամբ, նոցա էլ մասնակից կանէ։ Իսկ Ռօբէրը հաստատ է միշտ իւր խօսքին։ Ես շատ ուրախ եմ, պարոններ, որ նա գալիս է Պելոպոնէս. գոնէ նա կհամոզուի, որ անհիմն են եղել նորա նախապաշարուած մտքերը։ Ես յաճախ լսել եմ ինչպէս Ռօբէրը ասում էր թէ Պելոպոնէսի կառավարութիւնը վատ է կատարւում և թէ եթէ իշխանութիւնը նորա ձեռքին լինէր՝ կփոխէր բոլոր պաշտօնավարներին։ Բայց չնայելով սովորական կամակորութեան, ես հաւատացած եմ, որ Ռօբէրը շուտով կխոստովանուի, որ սխալուած է եղել այդ կողմից։

Այդ խօսքերի ժամանակ շատերի երեսները ծըռմըռուեցան և շատերը նայեցին միմեանց վերայ զարմացական և խորհրդաւոր կերպով։

Միևնոյն օրը, կէս օրից յետոյ, Աթէնքի իշխանի դեսպան Գօտիէն եկաւ Պետրալիֆասի մօտ։

—Գալիս եմ ձեաք բարովն ասելու ձեզ, ասաց նա մըտնելով։

—Ի՞նչպէս, դուք արդէն գնո՞ւմ էք, գոչեց Աննան։

—Ես պէտք է գնամ Վիլլարդուինի հետ։

—Մինթէ Վիլլարդուինը գնո՞ւմ է։ Ո՞ւր։ Երկա՞ր ժամանակով։

—Նա գնում է Բլիզիրի, կյուսամ, ոչ երկար ժամանակով։

Երևի թէ կանացի ինքնասիրութիւնը ստիպեց նորան առ ինքն վերագրել կյուսամ խօսքը, և փոքր ինչ կարմրեցաւ։

—Դուք ասում էք թէ՝ նա գնում է Բլիզիրի և ոչ երկար ժամանակով, ասաց Պետրալիֆասը,—իսկ ես կարծում եմ, որ նա գնում է Շամպանիա և բոլորովին։

—Դուք կարծո՞ւմ էք, հարցրեց Գօտիէն։

—Շատ կասկածում եմ։

—Ուրեմն ձեր կարծիքով այն ասպետը, որին սպասում են...։

—Նորա յաջորդն է։

—Եթէ այդպէս է, ասաց Գոտիէն դառնալով դէպի Աննան, այժմ կարող է յոյս ծագել իմ տիրոջ և իշխանի սրտի մէջ։ Վտանգաւոր ծերունին ինքը իջնում է ճանապարհից։ Թոյլ կտա՞ք ինձ յայտնել նորան այս բարեբախտ լուրը։

—Նախ և առաջ, պատասխանեց Աննան, թոյլ տուէք ինձ հարցնել ձեզանից թէ ի՞նչ էք կամենում ասել դորանով։

—Ես կամենում եմ ասել, և ես այդ վաղուց հասկացել եմ, որ Պելոպոնէսի կուսակալի որդին աւելի արժանի էր ցանկալ ձեր ձեռքը քան թէ Աթէնքի իշխանի եղբօրորդին։ Նա, պէտք է ճշմարիտն ասել, մի ասպետ է, որ մինչև այսօր չէ կարողացել հռչակել իւր անունը։

Աննան չքնաղ կերպով կծկեց իւր յօնքերը։

—Պարոն Գոտիէ, սկսեց նա արագութեամբ, որ ցոյց էր տալիս թէ՝ արիւնը սաստիկ եռում էր նորա երակներում,—ես չգիտեմ և չեմ պնդում թէ կամենում եմ գնահատել բոլոր քրիստոնեայ ասպետների քաջութիւնը։ Ես բոլորովին հաւատացած եմ, որ Գոդֆրիդ դը Վիլլարդուինը ամենաազնիւ ասպետն է բոլոր աշխարհի մէջ. ես նոյնպէս բոլորովին համոզուած եմ, որ ձեր տէրը և իշխանը ամենահզօր իշխանաւորի ամենանշանաւոր եղբօրորդին է։ Բայց ինձ ի՞նչ փոյթ մէկի ազնուութիւնը և միւսի փառքը։ Ձեզ շատ ցանկալի է, պարոն Գոտիէ, նպաստաւոր լինել ձեր տիրոջ քաղաքական շահերին։ Ես շատ լաւ հասկանում եմ այդպիսի ցանկութիւնը, դուք պարտաւոր էք այդպէս վարուել։ Բայց աղաչում եմ ձեզ. հանգիստ թողէք ինձ, ես ամենևին ոչինչ չեմ հասկանում քաղաքականութիւնից։ Մի յուսաք իմ միջոցով պարգև ստանալ ձեր դեսպանութեան համար։

Երբ Աննան ասում էր այս կծու խօսքերը, նորա աչքերը լցուեցան արտասուքով։ Բայց Գոտիէն ոչ միայն չվիրաւորուեցաւ, այլ և բռնեց և համբուրեց օրիորդի ձեռքը։

—Դեսպանի ամենագլխաւոր յատկութիւններից մէկն

է, ասաց նա, տոկունութիւն ձախորդութիւնների մէջ, և ես չեմ կամենում, որ ինձ նախատէին այդ յատկութեան պակասութեամբ։ Բայց ահա կուսակալը գնում է, ինձ հարկաւոր է շտապել։ Կվերադառնայ նա այստեղ թէ ոչ, ինձ թոյլ տուէք վերադառնալ և շարունակել ջանքս հասնել իմ դեսպանութեան նպատակին, և յուսալ աւելի լաւ յաջողութիւն։

—Դուք կարող էք վերադառնալ, պատասխանեց Աննան, իւր գեղեցիկ ոտով թխկացնելով գետնին, յուսով ըստիպել ինձ ատել իմ ձեռքը նոր պտուղին, այնպէս, ինչպէս ես ատում եմ նորա նախորդին։

Գոտիէն գլուխ տուեց, ծիծաղելով դուրս գնաց սենեակից, թռաւ ձիու վերայ և սրընթաց վազեց Վիլլարդուինի մօտ։

—Դու երեսդ դարձնում ես Վիլլարդուինից, աղջիկս, ասաց Պետրալիֆասը, և իրաւունք ունիս։ Վիլլարդուինը ընկաւ և արտաքսուած է։ Դու չես ցանկանում ամուսնանալ դը-Լա Ռոշի հետ, ես չեմ նախատում քեզ և՝ այդ բանի համար. մենք ունինք էլի մի երրորդ փեսացու, որ նոցանից երկուսիցն էլ աւելի լաւն է։ Քեզ նախասահմանուած է միացնել երկու պետութիւն, ուստի դու պէտք է լրջութեամբ մտածես։

Աննան յանկարծ թափեց յորդ արտասուքներ։ Ծերունին նայեց նորա վերայ հարցական կերպով։

—Այդ ասպետը, հեկեկալով ասաց օրիորդը, երևակայում է, որ ես գործիք կդառնամ նոցա քաղաքական փառասիրութեանց։ Ո՞վ է նորան իրաւունք տուել խօսել ինձ իւր—*իշխանաւորի* մասին։ Չէ որ ես ասացի նորան թէ՝ ատելով ատում եմ նորա իշխանին։

—Մի բարկանար նորա վերայ դորա համար, ասաց պապը։ Հուտով նա ստիպուած կլինի վերջ դնել իւր ձրգտումներին։

Աննան լռիկ նստեց անկիւնում։

Պետրալիֆասը նայում էր փոքր ինչ ժամանակ կուսակալի գնացքի վերայ, որ դուրս էր գնում քաղաքից. յետոյ կանչեց ծառային, տարաւ նորան պատշգամբը և ցոյց տուեց սարի վերայ մի կիսաւեր մատուռ։

—Այնտեղ, ասաց նա, ապրում է մի աղքատ ճգնաւոր. տա՛ր նորան իմ կողմից այս ոսկի դրամը։ Ես վաղուց խոստացել էի նորան ողորմութիւն ուղարկել, բայց մինչև այժմ խոստմունքս մնացել էր անկատար։

Մի ժամից յետոյ ծառան վերադարձաւ։

—Տուի՞ր փողը, հարցրեց Պետրալիֆասը։

—Այո, ինչպէս որ հրամայեցիք, ձերդ վսեմափայլութիւն։

—Ի՞նչ, ասաց ճգնաւորը։

—Ասաց թէ երեք անգամ պատարագ կմատուցանէ ձերդ վսեմափայլութեան հոգու փրկութեան համար։

—Ամէն, ասաց ծերունին, աչքերը դէպի երկինքը բարձրացնելով, և գնաց իւր սենեակը։

Մօտ կէս գիշերին նա դարձեալ կամացուկ դուրս եկաւ, մօտեցաւ պատշգամբին և զարմացաւ տեսնելով իւր թոռնուհուն դեռ ևս այնտեղ նստած։ Նա նայում էր դէպի Բլիզիրին։

—Դստրիկս, վտանգաւոր է այսպէս ուշ մնալ դուրսը, այժմ ցուրտ գիշերներ են լինում։

—Ո՛հ, վախենալու հարկ չկայ, պատասխանեց Աննան, երկինքը այնպէս պայծառ է և օդը այնպէս տաք և անուշահոտ։ Ես զմայլւում էի այն տեսարանով, որ գործում էր ձեր ճգնաւորի տնակի մօտ բլրի վերայ եղած կրակը, և էլի այն կրակի տեսարանով, որ վառւում է սարի գագաթի վերայ։

—Այս տարի շատ շուտով եկաւ գարունքը, ասաց ծերունին, և շուտով կանչեց հովիւներին դէպի լեռները։ Բայց վաղահաս գարունքը խաբուսիկ է. գնա քնելու և վստահ մի լինիր փետրուարի գիշերի տաքութեան։

Եթէ Աննային յիրաւի ախորժելի էր նայել սարերում բոցափայլող հովիւների խարոյկների վերայ, նա կարող էր աւելի ևս զմայլուիլ նոցա տեսարանով հետևեալ երկու գիշերը։ Գրեթէ բոլոր մօտաւոր և հեռաւոր սարերի վերայ, որք երևում էին հորիզոնի վերայ, խարոյկներ էին վառւում և երկիրը կարծես թէ կամենում էր մաքառել փայլմունքով աստեղալից երկնքի հետ։

Բայց չորրորդ գիշերը բոլոր շրջակայքը թաղուած էր խաւարի մէջ։

Աննան ըստ սովորութեան պատշգամբում նստած, նայում էր շրջակայ տեղերի վերայ. բայց ոչ սարերի վերայ և ոչ հովտում հովիւների խարոյկները այլ ևս չէին վառւում։ Երբ Աննան խօսում էր այդ բանի մասին իւր պապի հետ, յանկարծ հեռուից լսուեցաւ մի երկարատև սուլում, յետոյ երկրորդը աւելի մօտ տեղից, և մի քանի րոպէից յետոյ երրորդը գրեթէ բոլորովին պատշգամբի տակը։ Պետրալիֆասը վեր կացաւ տեղից և մտաւ դահլիճը։

Աննան զարմանքով լսեց ինչպէս պապը պճեղների վերայ զգուշութեամբ քայլելով իջաւ գաղտնի սանդուխքով, որ տանում էր դէպի փողոցը, բացեց դուռը և յետոյ ինքը փակեց չկանչելով ոչ մի ծառայ։ Փոքր ինչ յետոյ սանդուղքի վերայ դարձեալ լսուեցաւ նորա ոտքի ձայնը, բայց այս անգամ ով որ գալիս էր նորա ետևից։

Աննան վրդովուած, շտապեց դահլիճը և տեսաւ, որ պապին հետևում էր մի մարդ վարդապետական շորերով։

—Մենք այստեղ միայնակ ենք, ասաց Պետրալիֆասը. մեզ հետ է միայն իմ թոռնուհին, իսկ Աննայից հարկ չկայ բան ծածկելու։

Դահլիճի մէջ մտնելուն պէս, անծանօթ մարդը հանեց ձգեց վարդապետական վերարկուն, և Աննան զարմանքով տեսաւ իւր առաջ Առիւծ Խամարէթին։

—Զաւակս, ասաց ծերունին, երբ դու տեսնում ես, որ յոյներից ամենաքաջը մտնում է ինձ մօտ այդպիսի շորով, պէտք է հասկանաս դորանից, որ գործը վերաբերւում է մի շատ կարևոր ձեռնարկութեան։ Աշխատիր ոգի տալ սորան մինչև ես կգամ, յորդորիր յետ չկանգնել գործից, որից կախուած է, իմ կարծիքով, մեր ազգի ընդհանուր օգուտը և փառքը։

Պետրալիֆասը գնաց իւր սենեակը։

—Աւելորդ էր պապիս խորհուրդը, ասաց Աննան Խամարէթին. ես գիտեմ, որ դիւցազնական գործերի մէջ ձեզ անկայտ է յետ դառնալու ճանապարհը. էլ ի՞նչ բանում պէտք է ոգևորէ ձեզ իմ անզօր ձայնը։

—Ո՛հ Աննա, Աննա՛, դուք սխալւում էք, պատասխա-

նեց Խամարէթը։ Ես կարօտ եմ ոգևորող ձայնին մինչև անգամ Նորա համար, որ կարողանամ համբերութեամբ տանել կեանքի բեռը։

—Միշտ տրտում, ասաց օրիորդը, միշտ մռայլ մտքերով։

—Մեծ գործերը, Աննա՛, չեն կարող կատարուիլ առանց հաւատի, իսկ իմ սրտի մէջ մարել է արդէն հաւատը դէպի ինձ, դէպի բախտը, դէպի Նախախնամութիւնը։

—Այդպիսի մտքերը վտանգաւոր են, ասաց Աննան, անկեղծ ցաւակցութիւն արտափայլելով աչքերի մէջ։ Ի՞նչու անձնատուր լինել յուսահատութեան։ Պէտք է զինաւորուիլ զօրութեամբ և համբերութեամբ։ Քաջալերուեցէ՛ք և գործեցէ՛ք. այդպէս է մարդուս պարտաւորութիւնը։

—Ձեր խօսքերը, Աննա՛, թախծութեամբ ասաց Խամարէթը, ախորժելի են սրտիս. նոքա, ինչպէս մօր անուշ երգը, կառողջացնեն հիւանդ մանուկին։ Բայց դիցուք թէ ես քաջալերուեցայ և զինաւորուեցայ զօրութեամբ, ի՞նչ դուրս կգայ դորանից։ Երբ կայսերական գահը ոտնակոխ եղաւ խաչակիրների գարշապարով, ես կուրծքս դէմ դրի իբրև պատնէշ սարսափելի հեղեղին. հեղեղը անցաւ և ողողեց տարաւ ինձ։ Երբ հիւսիսից և հարաւից եկան թափուեցան մեզ մօտ հազարաւոր քաղցած բախտախնդիրներ, երբ մեր քաղաքները ամայացան, բերդերը կործանուեցան,—ես կրկնապատկեցի իմ եռանդը, կամենում էի փրկել մեր հայրենիքի գոնեա մի անկիւնը—Սպարտան, որ երբեմն Յունաստանի փառքն էր և պարծանքը։ Աւա՛ղ, հին քաղաքի պարիսպները խորտակուեցան ինչպէս մի շեղջ աւազի, Նորա պաշտպանները փախան ինչպէս եղջիւրները որսորդից, և իմ բազուկս ընկաւ անզօրութիւնից, կարծես թէ բռնած ունէր իլիկ և ոչ թէ սուր։ Ի՞նչպէս կարող են մռայլ չլինել մտքերս, երբ մահու վերարկուն պատել է հայրենիքս։ Ի՞նչպէս չյուսահատուեմ, երբ տեսնում եմ Յունաստանը անարգած. Նորա փառքի և ազատութեան արևը մայր մտաւ յաւիտեան և Նորա անունը ծաղր ու ծանակ է դարձել բոլոր ազգերի մէջ։ Ես տեսնում եմ, ինչպէս Նորա դիակը անպատուում են բարբարոսները, որ չգիտեն Նորա փառաւոր անցեալը, որ չեն հասկանում Նորա անմահ յիշատակ-

ների լեզուն։ Ո՛հ, Աննա։ Երբ այն լեռներից, ուր փողփո-
ղում էին նորա յաղթութեան դրօշները, այն հովիտներից
և ծովածոցներից, ուր ամենայն ինչ արտայայտում էր յաղ-
թութեան նշաններ, այն երկնքից, որտեղից արեգակի հետ
միասին լուսափայլում էր մեզ ազատութիւնը, երբ այդ բո-
լորից աչքս դարձնում եմ մեր վրայ, ստրուկներիս վրայ,
որ թափառում ենք նուաճած և ստրկացած երկրում, որ
ոտնակոխ ենք լինում գոռոզ ասպետների ոտների տակ,—
ես հասկանում եմ թէ ի՞նչու ամենքը արհամարհանքով
դարձնում են երեսը մեզանից։ Իսկ եթէ բարեպաշտ սրտե-
րի մէջ մենք շարժում ենք որպիսի և իցէ աւելի բարեմիտ
զգացմունք—այդ զգացմունքը հազիւ թէ կարելի է ցա-
ւակցութիւն անուանել։ Ո՛հ, այն ժամանակ ես վրդովւում
եմ նախախնամութեան դէմ, ես հարցնում եմ—ի՞նչու է
նա ինձ ստիպում քարշել կեանքի շղթաները, չէ՛ որ ես
հարիւր անգամ կամենում էի ազատուիլ նոցանից, մա՛հ
պտուելով պատերազմների դաշտերում։ Ես հարցնում եմ—
ի՞նչու նա արմատախիլ չարեց սրտիցս զգալու ընդունակու-
թիւնը։

—Նորա համար, որ Աստուածային Նախախնամութիւ-
նը իմաստնագոյն է քան մարդկային կրքերը, պատաս-
խանեց Աննան։ Երբ ձմեռը մերկացնում է ծառերը, Նախա-
խնամութիւնը պահպանում է նոցա նորա համար, որ նոքա
վերստին կանաչեն գարնան, նա չէ ոչնչացնում նոցա միայն
այն պատճառով, որ նոքա կորցրել են կանաչ տերևները։
Բոլորովին նոնպէս եթէ ձեր սիրտը մնացել է ցաւից յե-
տոյ, ուրեմն դեռ բոլորովին չէ թառամել. ուրիշ տեսակ
հոգմահարութիւնը կջերմացնէ նորան. նա կզգայ վերստին
ոյժ և զօրութիւն, և կենդանութիւն կստանայ բախտի և
գործունէութեան համար։

—Խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք, գոչեց Խամարէթը. թողէ՛ք
ինձ լսելով լսել այդ թանկագին խոստմունքը։ Այժմ, երբ
մենք ձեռնարկում ենք մի վճռողական, մեծ գործ, բարձրա-
ցրէք իմ վարկը իմ սեփական աչքի առաջ և, համոզեցէք
ինձ, որ ես չեմ այնպէս անարգ երկչոտ, ինչպէս ես ինձ
համարում եմ. վերադարձրէք ինձ հաւատ և զօրութիւն,
ասացէք ինձ միայն մի բառ—ասացէք, որ կայ աշխարհում

մի սիրտ, ամենազնիւ սիրտ բոլոր սրտերից, որը դեռ հաւատք ունի իմ վրայ, որը չի մնայ բոլորովին անտարբեր դէպի իմ ձեռնարկութեան հետևանքները։

—Ձեր ձեռնարկութիւնները, ասաց Աննան, ներշնչուած են վեհ հոգով, և ես համոզուած եմ այդ բանի մէջ, թէպէտ չգիտեմ նոցա։ Սէրը դէպի հայրենիքը ոգևորում է ձեզ այնպէս, ինչպէս և ինձ. ուրեմն ձեր փորձերը և նոցա յաջողութիւնը չեն կարող անտարբեր կացուցանել ինձ։

Այդ ժամանակ Պետրալիֆասը դուրս եկաւ իւր սենեակից քահանայական շորերով կերպարանափոխուած։

—Մի՛ զարմանար, զաւակս, ասաց ծերունին. այս զգուշութիւնը անհրաժեշտ է։ Մթութիւնը և ծածուկութիւնը թողութեան օգնականներն են։

—Ի՞նչ բան էք մտադրել, հարցրեց Աննան անհանգստութեամբ. ո՞րպիսի վտանգին էք ենթարկում ձեզ, պապս։

—Երբ դու ինձ տեսնում ես այս բազուկի պաշտպանութեան տակ, ասաց Պետրալիֆասը բռնելով Խամարէթի ձեռքը, մի վախենար։ Բայց ինձ հարկաւոր է գնալ։ Աշխատիր, որ Անդրավիդում ոչ ոք չիմանայ իմ բացակայութիւնը։

Ցետոյ երկուսն էլ դուրս գնացին տնից, և ծերունին լռիկ ճնչիկ հետևում էր Առիւծին քաղաքի փողոցներում։

Հասնելով Ս. Սոփիայի եկեղեցուն, քաղաքի արուարձանի մօտ, նոքա հանդիպեցան ծառային, որ կանգնած էր պատի անկիւնում երեք ձիով։ Նստեցան ձիերի վերայ և հեռացան նոր ուղեկիցների հետ միասին դէպի լեռները։

13.

ՓԱ՛ՌՔ ՀՕՐ։

Գնալով երեք ժամի չափ, ճանապարհորդները հասան մի սարի ստորոտին։ Պետրալիֆասը և Խամարէթը իջան ձիերից, յանձնեցին նոցա ծառային, և երկուսը միասին գնացին մի նեղ լեռնաշաւղով, որ օձապտոյտ գալարւում էր

ժայռերի միջով, և շատ անգամ Խամարէթը ստիպուած էր լինում բռնել և օգնել ծերունուն։

Հուտով նոքա դուրս եկան հարթած շաւղից և մտան անտառը։ Երիտասարդ Լակեդեմոնացին գնում էր անտառի մէջ երբեմն ձեռքով շօշափելով ծառերի բունը, իսկ երբեմն նայելով քարերի դրութեան վերայ, որ շաղ էին տուած այստեղ ու այնտեղ ճանապարհը ճանաչելու համար։

Դուրս գալով անտառից, ուղևորները տեսան մի խոր ձոր։ Նոքա սկսեցին ցած իջնել մեծ զգուշութիւններով և հասան մի սրընթաց հեղեղին, որ մեծ աղմուկով գլորում էր իւր ալիքները։ Խամարէթը տարաւ ծերունուն գետի ափով, ժայռերի միջով, ուր շատ վտանգաւոր կլինէր մանգալ այդ վայրենի տեղերին անծանօթ մարդուն։ Հասնելով այն տեղին, ուր կարելի էր անցնել հեղեղը, Խամարէթը դուրս քաշեց քարերի տակից մի գերան, օգնեց Պետրալիֆասին անցնել նորա վերայ միւս ափը, և յետոյ նետեց միւս կողմը այդ անարուեստ կամուրջը։

Այնուհետև նոքա գնացին մի գետակի ափով, որը ծածկուած էր խիտ թփերի տակ։ Ուղևորները գնում էին նորա բոլոր օձապտոյտ դարձուածների ընթացքով և անցնելով մի սարի լանջը տեսան սարի միւս կողմում սոսկալի անդունդներ, կարծես թէ երկիրը ճեղքուել էր հրաբղխային ժայթքումներից։

Ուղևորները նստեցան։ Խամարէթը սուլեց երեք անգամ այնպէս, ինչպէս Անդրավիտում։

Մի րոպէից յետոյ սարից պատասխանեցին նոյնպէս երեք անգամ սուլելով. դարձեալ մի րոպէից յետոյ երեւեցաւ մի մարդ և մօտեցաւ ուղևորներին։

—Ի՞նչ տեղ է, հարցրեց նա։

—Լակեդեմոն, պատասխանեց Խամարէթը։

—Ի՞նչ էլի։

—Հաւատարիմ։

Այն ժամանակ անծանօթ մարդը մեկուսացրեց Խամարէթին մի կողմ և կամաց ձայնով փսփսաց նորա հետ։ Գոհ մնալով ըստ երևութին, ստացած տեղեկութիւններից, նա ընկաւ առաջ, Խամարէթը և Պետրալիֆասը հետևեցին նրան։ Նոքա անցան ժայռերի մի տեսակ պարիսպ, որ կանգ-

նած էր նոցա առաջ և տեսան մուտք դէպի մի քարայր։ Մանելով ներս՝ նոքա գտնուեցան մի նեղ խաւար ստորերկրեայ անցքի մէջ, ուր լսւում էր քարերի վերայ խորտակուող հեղեղի խուլ աղմուկը։

Պետրալիֆասը ինքն իրանից հարցնում էր մտքում թէ ո՞ւր արդեօք պէտք է հասցնէ նորան այդ վայրենի, խաւար ճանապարհը։ Հասնելով այնտեղին, ուր ջրվէժը թափւում էր սև անդունդի մէջ, ծերունին անցաւ մի ժայռուտ պատի մօտից և յանկարծ նորա աչքերին ներկայացաւ մի անսպասելի տեսարան։

Քարայրի դարձուածը նման էր մի ընդարձակ, բոլորաձև դահլիճի. եղևնափայտի խարոյկը, որի ծուխը դուրս էր գնում քարայրի ծածուկ ծակոտիկներով, լուսաւորում էր նորա մէջ տեղը, իսկ հեռաւոր անկիւնները մնում էին խաւարի մէջ։ Խարոյկի շուրջը նստած էին մօտ քառասուն մարդիկ խոժոռ դէմքերով։ Նոքա ամենքը զինաւորուած էին։

Լսելով Խամարէթի և նորա ուղեկիցների ոտի ձայնը, մարդիկ առաջ շփոթուեցան և իսկոյն բռնեցին իւրեանց թրերի կոթերը։ Բայց հէնց որ լակեդեմոնացին մօտեցաւ լուսաւորուած տեղին, ընդ առաջ վազեց նոցանից մէկը, վիթխարի հասակով, ձիու բաշի նման խիտ և երկար մազերով, սև մօրուքով, ոչխարի մորթուց կարած շորով— և այդ բոլորը տալիս էր նորա երեսին մի տեսակ վայրենի, ահարկու կերպարանք։ Նա բռնեց իւր հզօր ձեռքով Խամարէթի ձեռքը և թափ տալով այն կոտրելու վտանգ ըսպառնող ուժգնութեամբ՝ ասաց.

— Լակեդեմոն, փառք Հօր։ Մենք բոլորս էլ ներկայ ենք։ Ա՛խ,... ես կարծում եմ, որ մենք այստեղ աւելի շատ ենք, յարակցեց նա, մի ծուռ նայուածք ձգելով Պետրալիֆասի վերայ։

—Այ մտերիմ բարեկամ է, ասաց Խամարէթը, կասկած նշմարելով Պետրալիֆասի վերայ ձգած խոսողի նայուածքի մէջ։—Սա բերել է մեզ օգնութեան խոստմունք Եղլադայի իշխանի կողմից։

—Փառք Հօր, գոչեց վայրենի զինուորը, ձեռքը մեկնելով Պետրալիֆասին։ Մեր հայրենիքի մի ծայրից մինչև միւս ծայրը մենք կամղում ենք մի սիրտ և մի հոգի։ Փառք Հօր։

—Այդ բարեպաշտ բացագանչութիւնը չէ՞ ցոյց տալիս ինձ արդեօք, որ առաջս կանգնած է քաջ Վուտսարոսը, հարցրեց ծերունին։

—Նա ի՛սկ է, որին մականուն են տուել Փառք Հօր, ասաց, ժպտալով, զինուորը։ Ի հարկէ։

—Բոլոր յոյն սրտերը ողբում էին ձեզ, հերոս, պաշտպան Հարտիսի, շարունակեց Պետրալիֆասը։ Մեզ լուրեր հասան թէ իբր դուք սպանուած էիք ձեր քաղաքի աւերակների մէջ։ Մեծ բախտաւորութիւն է Յունաստանի համար, որ այդ լուրը սուտ է եղել։

—Իմ կեանքի վերջին ժամը գրեթէ զարկել էր, ասաց Վուտսարոսը։ Բայց Աստուծուն հաճելի էր թողնել ինձ դեռ ևս երկրի վրայ։ Փառք Հօր։ Գուցէ դառն բաժակի մէջ նա պահում է ինձ համար էլի մի քանի կաթիլ վրէժխնդրութիւն։

—Ո՞ւրտեղ էք դուք թագնուում այն ժամանակ, երբ հայրենիքը ողբում է ձեր կորուստը։

—Սարերի մէջ, ուր չէ թագաւորում ստրկութիւնը։ Ես ապրում եմ անտառի գազանների հետ, հեռու բռնակալներից. ապրում եմ ինքս էլ ինչպէս գազան անտառի։ Բայց ի՞նչ վնաս, գոնէ ես ազատ եմ։ Փառք Հօր։

—Աւելի համարձակ եղիր, քաջ զինուոր։ Աւելի համարձակ եղէք, քաջ ընկերներ, ասաց Պետրալիֆասը դառնալով դէպի բոլոր ժողովը։ Աստուած դեռ բոլորովին չէ դարձրել երեսը իւր ընտրեալ ազգից։ Բազմաթիւ մեղքերի փոխարէն Աստուած ուղարկեց ծանր փորձանքներ. բայց մարտիրոսների պսակը նախապատրաստուած է նոցա համար, ով պաշտպանում է սուրբ գործը։ Եղլագայի իշխանը յանձնեց ինձ հաւատացնել ձեզ, որ նա ունի կատարեալ համակրութիւն դէպի Պելոպոնէսցի եղբայրները։ Ցայտնեցէք նորան ձեր պէտքերը, հաղորդեցէք նորան ձեր յոյսերը, և նա կմեկնէ իւր ձեռքը թշուառ հայրենակիցներին։

Նորանից յետոյ խօսեց Խամարէթը։

—Մենք պարտաւոր ենք, ասաց նա, անխոնջ հսկել միշտ մեր մօր —հայրենիքի գերեզմանի մօտ և լինել պատրաստ օգնելու նորան լսելով նորա սրտից դուրս թռած առաջին հեծը, նշմարելով փրկութեան ամենափոքր յոյսը։

Իսկ այժմ մեր հայրենիքի հառաչանքները ոչ միայն հասել են մինչև մեր ականջը, այլ և բարձրացել են մինչև երկինքը։ Զարկել է բոպէն գործել յօգուտ նորա, և ահա այդ իսկ նպատակով է, որ ես ժողովել եմ ձեզ, իմ հին զինակիցներ։ Կշռեցէք ձեր խելքով և ձեր սիրով դէպի հայրենիքը ներկայ բոպէի բոլոր հանգամանքները և ասացէք ինձ կհասնե՞նք արդեօք երբ և իցէ աւելի բարեպատեհ ժամանակին մեր գործի համար, եթէ միայն յիրաւի ցանկանում ենք թօթափել մեզանից օտար լուծը։ Իմացէք երևելի նոր լուր — Վիլլարդուինը փոխուում է։

Այս խօսքերը խորը տպաւորութիւն գործեցին բոլոր ժողովի վերայ, լսուեցան զանազան բացագանչութիւններ։ Մի քանի բոպէ շարունակուում էր շարժողութիւնը։ Վերջապէս հանդարտութիւնը նորոգուեցաւ, Առիւծը շարունակեց։

— Այո՛, Վիլլարդուինը փոխուում է. նորա տեղը ուղարկում են կոմս դը-Շամպլիտի եղբօրորդի Ռօբէրին։ Իշխանաւորի այդպիսի փոխուիլը Աստուծոյ ողորմութեան նշան է. այստեղից կարող է ծագել մեր ազատութիւնը։ Մի՞թէ դուք կարծո՞ւմ էք, որ Վիլլարդուինը, արեան գնով նուաճելով ամբողջ Պելոպոնէսը քաղաք քաղաքից յետոյ, վայելելով մի քանի ամիս շարունակ անսահման իշխանութեան քաղցրութիւնը, ամուր հաստատելով իւր գահը նորան պաշտող ասպետների նիզակների վերայ և ժողովրդի սիրոյ և համակրութեան վերայ, — մի՞թէ դուք կարծում էք, որ այդ բոլորից յետոյ Վիլլարդուինը յօժար կամքով ձեռքից բաց կթողնէ այդպիսի հարուստ աւարը և կհեռանայ ինչպէս մի ծեծ կերած աշակերտ։ Միւս կողմից՝ մի՞թէ կարելի է ենթադրել, որ Ռօբէրը ստանալով Հօրեղբօր ժառանգութիւնը և մեր արիւնով ու քրտնքով կերակրուելու իրաւունքը, կհրաժարուի իւր իրաւունքից առաջին հանդիպած դժուարութիւնից յետոյ։ Մենք շատ լաւ ճանաչում ենք դոցա բոլորին, այդ ագահ և կամակոր բարոններին։ Նոցա յափշտակութեան և իշխանութեան ծարաւը հասնում է ծայրայեղ աստիճանի, այդ կիրքը իշխում է նոցա վերայ և դժուարութիւնները միայն գրգռում են նոցա և ոչ թէ յետը կասեցնում։ Ուրեմն այստեղ կլինի հակառակութիւն

շահերի, ընդդիմահարութիւն փառասիրութեան. իսկ մենք պարտաւոր ենք հարուածել մեր բռնակալներին ամեն միջոցներով, բոլոր ոյժերով։ Եւ նոքա հակառակելով ու թշնամութեամբ վարուելով միմեանց հետ ինքեանք կգործեն յօգուտ մեր։ Մեզ մնում է առայժմս պահպանել միայն կրակը, աշխատել, որ յաղթող կողմի զօրութիւնը չհանգցնէ այդ կրակը։—Կանգնենք աւելի թոյլի կողմը, որպէս զի հաւասարակշռենք ոյժերը այնքան ժամանակ, մինչև որ կնուազի երկու կողմերի ոյժը և այն ժամանակ հեշտ կլինի մեզ յաղթել նոցա երկուսին էլ։

—Բայց, ո՞րն է հակառակորդներից աւելի թոյլը. հարկաւո՞ր է արդեօք խօսել դորա մասին։ Ի հարկէ նա, այն օտարականը, որ գալիս է իւր համար օտար ազգի մօտ։ Յաղթողների հետ նա կապուած չէ ոչինչ ընդհանուր քաջութիւններով, իսկ յաղթուած ժողովրդին դեռ նա չէ ցոյց տուել իւր քաջութիւնը, իւր կառավարչական հմտութիւնը։ Ուրեմն աւելի թոյլը—Համպլիտն է։ Բարոնները պէտք է համարեն նորան իբրև յափշտակող նոցա իրաւունքների, իսկ ժողովուրդը—իբրև քաղցած նուաճող, որ բռնում է նորա քրտնքով արդէն կշտացած իշխանաւորների տեղը։ Մենք չենք կարող, ինչպէս հին ժամանակներում, միայնակ բարձրացնել հպարտութեամբ Ցունաստանի դրօշակը մեր հայրենիքի ամեն մէկ թշնամու դէմ. ուրեմն խոնարհուենք առ ժամանակ հանգամանքների առաջ և միանանք Համպլիտի հետ։ Ֆրանսիայում մեր վարմունքը կվերագրեն մեր հաւատարմութեան. կասեն թէ մենք ապստամբել ենք մեր իշխանի իրաւունքները և թագաւորի հրամանը պաշտպանելու համար, և մեր ապստամբութիւնը ոչ միայն չի հանդիպի դժուարութիւններին և չի յարուցանի ոչինչ կասկած, այլ և կստանայ գովասանքներ և օգնութիւն։ Այդպէսով մենք կշնչենք միակ ամուր հաստատուած և մեզ համար վըտանգաւոր իշխանութիւնը—Վիլլարդուինի և նորա գինակից ընկերների իշխանութիւնը։ Ռօբէրի գալուց յետոյ Վիլլարդուինը կամ պէտք է գնայ, որ բոլորովին անկարելի է թւում ինձ, որովհետև այդ մարդը ընդունակ է աւելի շուտով տիրել այն բանին ինչ որ նորանը չէ, քան թէ յանձնել ուրիշին այն, ինչ որ ինքն է ձեռք բերել.—և

կամ պէտք է ընդդիմանայ, հզօր իւր իրաւունքի և զօրութեան համոզմունքով։ Առաջին դէպքում— մեր գործի կէսը կատարուած կլինի, որովհետև մի հաստատ հիմք ունի դրած և անյաղթելի բռնակալը կհեռանայ մեր երկրից։ Իսկ այն դաշնակցութեամբ և միութեամբ, որի հիմունքը դնում ենք այսպիսի բարեյաջող և բախտաւոր նշաններով, մենք պատրաստում ենք գործի միւս կէսը—մեզ դժուար չի լինի դուրս քշել նորեկ օտարականին, որ դեռ չէ ստացել ոչինչ ազդեցութիւն։ Իսկ եթէ ընդհակառակն Վիլլարդուինը կընդդիմադրէ, այն ժամանակ մանաւանդ հարկաւոր կը լինի առաւել ևս ամրապնդել մեր միութիւնը և դիմադրել միմեանց հետ մարտնչող իշխանաւորներին։

—Աստուծոյ աջը առաջնորդում է մեզ մեր արդար և փառաւոր գործի մէջ, ոգևորուած աւելացրեց Առիւծ Խամարէթը։ Ապացոյց առ այս—Եղլադայի իշխանի մեզ համար թանկագին համակրութիւնն և աջակցութիւնն է։ Երբ Յունաստանի երկու ձեռքը—Էպիրոսը և Պելոպոնէսը—կմիանան միասին գործելու համար, ես չգիտեմ—կա՞յ արդեօք երկրի վերայ մի ոյժ, որ դիմանար նոցա։ Այս միութիւնը իջնում է մեր մէջ իբրև երկնային պարգև։ Այլ երաշխաւորութիւն ինձ հարկաւոր չէ բացի իմ վսեմափայլ ուղեկցի երաշխաւորութիւնից։ Ցայտնել ձեզ նորա անունը—ես չեմ կարող, չունիմ մինչև անգամ իրաւունք ի նկատի առնելով նոյն իսկ մեր ձեռնարկութեան օգուտը։ Բայց նորա խօսքը դուք կարող էք ընդունել իբրև նոյն իսկ Եղլադայի փառաւոր իշխանի խօսք։ Հայրենակիցնե՛ր, Աստուած ուղարկում է մարդոց գիսաւոր աստղեր և երկնային երևոյթներ, իբրև իւր բարկութեան նշաններ.—նոյնպէս իսկ նա ուղարկում է բարեբախտ հանգամանքներ այն ազգերին, որ հաճել է փրկել և ազատել։ Դուք տեսնում էք, ահա Աստուած ուղարկել է մեզ իւր հայրախնամ նախասահմանութեան ամենահզօր ապացոյցը։ Եթէ մենք օգուտ կքաղենք Աստուծոյ առ մեզ յայտնի ողորմութիւնից,—մեր ջանքերի փոխարէն կստանանք իբրև պարգև—ազատութի՛ւն. իսկ եթէ մենք կարհամարհենք Նորա ողորմութիւնը, դորանով ցոյց կտանք, որ արժանի չենք ազատութեան։

Այդ խօսքերից յետոյ թնդացին ծափահարութիւններ

և Վուտսարոսը իւր բարձր ձայնով գոչեց — Փա՛ռք Հօր։

Բայց ներկայ եղողներից ոմանք երկմտութեան մէջ էին։ Ժողովի աւագագոյներից մէկը շատ երկար խօսեց, թէ որչափ վտանգաւոր է նոր փոթորիկներին ենթարկել հայրենիքի խախտուած նաւակը, զարթեցնել հանդարտուած առիւծի կատաղութիւնը, վառել կործանման խարոյկը փոխանակ ազատութեան լապտերի։ Բացի դորանից՝ նա արեց այլ շատ նկատողութիւններ թելադրուած զգուշութիւնից և հեռատեսութիւնից, որ մօտ էին փոքրոգութեան։

Խամարէթը վեր թռաւ տեղից։

— Ի՞նչ է, գոչեց նա, միթէ միայն մե՞նք ենք մահկանացու, միայն մե՞նք պէտք է վախենանք թշնամիներից։ Ի՞նչ է, մենք նապաստա՞կ ենք թէ եղջերու, իսկ այդ գոռոզ յաղթողները — առի՞ւծ։ Միթէ մենք աւելի քի՞չ ունինք հզօր բազուկներ, քան թէ նոքա, որք կարող են գործել, սրտեր, որք կարող են զգալ իւրեանց արժանաւորութիւնը։ Հաւատացէ՛ք ինձ — ստրուկները միայն նոքա են, որք կամենում են ստրուկ լինել։ Նա, որ դիմադրում է բռնակալներին, կենդանի թէ մեռած — ազատ է։ Մի՞թէ մենք չունինք աւելի բարձր պարտաւորութիւններ, քան թէ անձնապաշտպանութեան հասարակ բնազդումն։ Կա՛ր ժամանակ երբ այս երկրի վերայ, որ պատկանում էր մեզ, մարդիկ նետւում էին պատերազմի մէջ հոգեզմայլութեամբ, և իբրև ամենաբարձր երջանկութիւն։ — պտռում էին մահը հայրենիքի համար։ Մայրերը, ուղարկելով իւրեանց զաւակներին պատերազմ, ցանկանում էին մեռած տեսնել նոցա, վահանների վերայ բերած, քան թէ կենդանի վերադարձած վահանները ձգելով։ Այն ժամանակ մեր Յունաստանը բախտաւորութեան թագաւորութիւն էր, կենդրոն աշխարհքի, երկրաւոր արքայութիւն (դրախտ)։ Յունաստանի զաւակները, որք այնպիսի քաջութեամբ նուիրում էին իւրեանց կեանքը նորա համար, կամաց կամաց ըմպում էին փառքի և երջանկութեան բաժակից։ Իսկ այժմ, ի՞նչ է խոստանում մեզ այս կեանքը, որ մենք կամենում ենք գնել փառքի, պատուի, մարդկային արժանաւորութեան գնով։ Խոստանում է ստրկութի՛ւն, ամօթ, արհամարհանք, աղքատութիւն, նախատինք։

Հայկաբերդ 287
Բէլուայ սար . . . . . »
Լէկք 288
Հայկի սրկիք.—Ժողովից Գիւտ ա. քահ. Աղանեանց . . . . . »

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Խ. Աբովեանի յիսնամեակ 290
Գլադստոն Կ. 291
«Գիւան»-ի նոր հատորը 296
Ս. Էջմիածնի գրչագիրների ցուցակ. 298
Գիտական նորութիւն, թրգմ. Լեւոն Մ.-Ա. 299
Վանքի միաբանութեան որոշում 305
«Լումայ» նուիրողներ 307
Ստացուած գրքեր . . . . . »
Խմբագրութիւնից 308

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Մօրէի իշխան, թրգմ. Վ. Ծ. վ. Բաստամեան . . 49—110

ԼՈՒՄԱՅ
ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

Առաջիկայ 1899 թուին կհրատարակուի երկու գիրք։

Առաջին գիրքը լոյս կտեսնի յունվարի 1-ին, իսկ երկրորդը՝ յուլիսի 1-ին կանոնաւորապէս։

«ԼՈՒՄԱՅ» հանդիսի բաժանորդագինն է տարեկան 3 ռ. իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ 2 ռուբլի։

1896 և 1898 թուերի համարներից մնացել են սակաւաթիւ օրինակներ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „ЛУМА“ կամ протоіерею **Гюту Аганьянцъ.**